



Téléphone C. 03-97

Rédaction et Administration :
7, Rue Papère — MARSEILLE

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԺԳ Տարի - ՄԱՅԻՍ 1938



14^{me} Année - Mai 1938

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ — Ճիւղեր	Յ. Ն. Ղ.
ՀՈԳ. ԿԵԱՆՔ — Քրիստոսի հետ նոյնանալ	Թրգմ. Ն. Մ.
ՇՆՈՐՀԱՅ ԾՈՎԷՆ — Տէրոջը նպատակը իմ մասին	Եռնիկա Լազարեան
ՇՈՂԵՐ ԵՒ ՇԱՂԵՐ ԿԵՆԱՅ ԱԾՈՒՆԵՐԷՆ — Քարոզը ինչո՞ւ կրկին գրուեցաւ, Պարտարաճին մէջ ապաշխարութեան երգ, Ներքիւ, Զարմանալի ծրար մը, Աստուած կրնայ օգնել, Ի՞նչ ընելու ենք որ դատապարտուինք	Հասարակց' վեր. Ժ. Կ. Պ.
Ս. ԳՐԱԿԱՆ ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ — Անհատ հաւատացեալը եկեղեցին մէջ	Scoffieldէն
ՏԱՌԱՊԱՆՔԻ ԵՐԳԵՐ — Յուին դերը	Սամուէլ Պ.
Յարութեան մարմինը	վեր. Ա. Զ. Եղոյեան
ՊԱՏՄԱԿԱՆ — Մեծ դէմքեր ու դէպքեր Հայոց հաւատոյ ընտանիքէն	Բրոֆ. Գ. Գ. Խայիկեան
ԵՐԶԱՆԻԿ ՅՈՅՍԸ — Զար ժամանակներ	Արմէն Շահպաղլեան
ՊԱՏԱՆԵԱՅ — Աստուած մեզի հետ	Յ. Ք.
Սիրէ', Խնայէ'	Բ. Գ. Եարտըմեան
ՄԱՆԿԱՆՅ — Մանկական իդէա	Սիսակ Գալայճեան
ՋՆՆԱՋԱՆ ԼՈՒՐԵՐ	
ԵՐԳ — Օ'ն զարթիր	Յ. Ն. Ղ.

ԲԱՆԲԵՐ հոգեւոր ամսաթերթը մէկու. ֆրանսահայ Աւետարանա-
կան եկեղեցիներու. պաշտօնաթերթն է, այսու. ամենայնիւ,
նպատակ ունի ծառայելու. ամենուն, որոնք Տշմարտութիւնը
կը փնտռեն եւ. ծարաւը կըզգան Աստուծոյ խօսքին անխաղախ
վկայութեան: Քանի որ Քրիստոս չեկաւ միայն կարգ մը
անհատներու. համար, այլ ամենուն, բնաւ Տշմարտութիւն
ներկայացուցիչն ալ չճանչնար ո եւ է յարանումութիւն մը,
հապա մէկ է անոնց հետ, որոնք ՏՔրիստոսի մէջ իրեն կը
միանան: ԲԱՆԲԵՐ կ'ուզէ ծառայել անոնց:

«ԲԱՆԲԵՐ» հոգեւոր ամսաթերթը կը հրատարակուի Մարտէլի մէջ 16 էջերով (կողքէն զատ)
անոր խմբագրական ժարմինին անդամներն են
Վեր. Գ. Ն. ՂԱԶԱՐՈՍԵԱՆ, Վեր. Ժ. Կ. ՊԱՐՍՈՒՄԵԱՆ, Վեր. Ա. Օ. ՓԱՓԱԶԵԱՆ, Վեր. Զ. Բ. ՊՈՏՈՒՄԵԱՆ
Բրօք. Գ. Գ. ԽԱՅԻԿԵԱՆ, Պատ. Ա. ՊԱԿԻԱԿԵԱՆ, Պատ. Վ. ՍԱՀԱԿԵԱՆ, Պատ. Ի. ՍԲՐԱՀԱՄԵԱՆ

ԲԱՆԲԵՐԻ համար յօդուած կրնան գրել անոնք միայն, որոնք
գիտեն վերստին ծնունդն ու հոգեւոր կեանքը եւ անոր մէջ
ապրելու. ամենօրեայ ուրախութիւնը կը վայելին Քրիստոսով:
Յօդուածաշարքեր մ'ընեն որ ամբողջութեամբ խմբագրութեան
ծեռքը չհասնին, նկատի չեն առնուիր:

Յօդուածներ կարելի եղածին չափ ընթեռնելի եւ մեկնում գրուած
ծուղմին մէկ կողմին չ'ըլլայ միայն եւ ԿԱՐՃ ըլլալու են: Խմբա-
գրութիւնը յօդուածները յապաւելու եւ սրբագրելու. եւ օգտակար
դարձնելու. համար փոփոխութիւններ ընելու. ինչպէս նաեւ զանոնք
չհրատարակելու. իրաւունքը իրեն կը վերապահէ, քանզի իրօք
կուգան լաւ յօդուածներ որոնք երբեմն կրկնութիւն են
առաջուրէն հրատարակուած խորհուրդներու: Այսպիսիներ զանց
կ'ընենք, ուրիշ յօդուածներու. տեղ ապու. համար:

ԲԱՆԲԵՐԻ բաժանորդագրութիւնը տարեկան է եւ կանխիկ
բաժանորդագրութիւնը կ'սկսի ամէն տարի ցունուարին
եւ կը վերջանայ Գեկտեմբերին:

— ԲԱԺՆԵԳԻՆՆ Է —
Ֆրանսա 25 ֆրանք, Սուրիա 20 ֆրանք
Արտասահման Տոլար 1. 25

Դ Ի Ի Ր Ո Ի Թ Ե Ա Ն Հ Ա Մ Ա Ր
ՀԵՏԵԻԵԱԼ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆԸ
Ամերիկայէն travelers check, թղթադրամ
եւ ամերիկեան նամակադրօշմ կրնայ զրկուիլ:
Ուրիշ երկիրներէ \$ 1.25ի համարժէք ամէն տեսակ դրամ:

Յօդուածներ զրկուելու են Պատ. ՎԱՀԱՆ ՍԱՀԱԿԵԱՆԻ
խիկ թղթակցութիւններ եւ դրամական առաքումներ
Վեր. Գ. Ն. ՂԱԶԱՐՈՍԵԱՆԻ անունով, երկուքն ալ
հետեւեալ հասցեով.—

Réd. «PANPÈRE» c/o Rev. H. N. GHAZAROSSIAN
7, Rue Papère
MARSEILLE (France)

Մանապով գրամական առաքումի առթիւ հաճեցէք մանապէն վրայ գրել
H. N. Ghazarossian, 7, rue Papère - Marseille (France) C. C. No. 182.53-Marseille

ԲԱՆԲԵՐ

Արթնցի'ր դուն
որ կը քնանաս, եւ
կանգնէ մեռելնե-
րէն, ու Քրիստոս
քեզի լոյս պիտի
տայ:
Եփես. Խ. 14

Քանզի ալ աս-
կէ քիչ մը ատենէն
Ան որ գալու է՝
պիտի գայ ու պի-
տի չուշանայ:

Ուրեմն ա'լ վախճանք, որ չըլլայ թէ
Անոր հանգիստը մտնելու խոստմունքէն որ մեզի մնացեր է,
ծեցմէ մէկը զրկուած գտնուի: Երբ. Գ. 1

Երբ. Ժ. 37

ԺԴ. ՏԱՐԻ

ՄԱՅԻՍ 1938

ԹԻԻ 5



Ի՞նչ են հաւատացեալները



ՃԻՒՂԵՐ

Ես որթն եմ եւ դուք ճիւղերն էք, ան որ
Իմ վրաս հաստատուած է՝ եւ Ես անոր վրայ,
անկէա շատ պտուղ կը բերէ, վասն զի առանց
Ինծի բան մը չէք կրնար ընել:

Յովհ. ԺԵ. 5

Անցեալ տարի, այգեկութէն քիչ առաջ, հրա-
ւիրուած էի տեղ մը, ուր աչքիս զարկաւ հմայիչ
տեսարան մը: Պարտէզին կողմը, տան դրան
առջեւի ընդարձակ սալահատակը ծածկուած էր
գեղեցիկ որթատունկի մը ճիւղերուն թանձրա-
խիտ տերեւներու զովացուցիչ հովանիին տակ,
ողկոյզները կը կախուէին եւ անհամար աչքեր
դէպի մեզ կը նայէին գեղեցկութեամբ զիրար
գերազանցելով եւ կարծես մեր ուշադրութիւնը
իրենց առինքնելու ճիգով: Պահ մը անխօս կանգ
առնելու էի, այս զգլխիչ տեսարանին առջեւ,
ըմբռնելու անոր գեղեցկութիւնը և հիացումս
յայտնելու տան տիրոջ, որ այսքան գեղեցիկ
կարգի դրած էր որթին իւրաքանչիւր ճիւղը:
Կարծես իւրաքանչիւր տերեւն ու իւրաքանչիւր
ողկոյզը նոյնիսկ իւրաքանչիւր պտուղը իրեն
յատուկ և յարմար տեղն ընդունած էր, այդ
գեղեցկութիւնը ամենափափուկ նրբութեամբ
պահելու համար:

Տան տէր բարեկամս նոյնիսկ ծծմբախառ-
նուրդով սրակում մըն ալ ըրած էր ճիւղերուն ու
տերեւներուն վրայ, զանոնք փտտութենէ և
ներքին թունաւորումէ ազատելու, ինչպէս նաեւ
պաշտպանելու զանոնք իրենց պտուղներով՝ վնաս-
ակար միջատներէ, որոնք երբեմն պարտիզպանի
ամիսներով աշխատութիւնն ու ծառերու գոր-
ծունէութիւնը ի դերեւ կը հանեն, անոնց գեղեցիկ
պտուղները վիրաւորելով և անոնց բարգաւաճու-
մը կասեցնելով:

Այս գեղեցիկ մշակուած որթատունկին առջև

ակամայ միտքս կուգար Պօղոս առաքեալի
գոհունակ մէկ խօսքը. «Դուք Աստուծոյ մշակու-
թիւնն էք» (Ա. Կորնթ. Գ 9): Իրաւ եկեղեցին իր
մշակութիւնն է, իր աշխատութեան դաշտը, և
իւր վարձքն է տեսնել անոր կատարելութիւնը,
սրբութիւնը, որ նա անրիծ ըլլայ, առանց արատի
և խորշոմութեան:

Վերի գեղեցիկ տեսարանին առջեւ, երբ դեռ
Իմ աչքերս կուշտ կուշտ կը յագենային այդ
հմայքով չէի կրնար սակայն իմ հետաքրքրու-
թիւնս զսպել, զիտնալու թէ ո՞ւր կը գտնուէր
բուն որթը: Բարեկամս ցոյց տուաւ իր տան միւս
ճակտին վրայ երկարող անպաճոյճ որթատունկը,
որ թէեւ գեղեցկութիւն մը չունէր և տարբերու-
թիւն մը չպիտի ցուցնէր ևրկար ատեն մէկդի
նետուած չոր փտտած փայտէ մը, եթէ առջեւի
գեղեցիկ տեսարանը առաջունէ տեսած չըլլայի,
սակայն այդ աննշան երեւոյթը եղող բունը ցոյց
կուտար թէ հաստատուած էր հողին ճիշդ կուրծքին
մէջ և անոր խորերը յրկած էր իր արմատները,
որոնք անլուր բայց բշիջային մեծ գործունէու-
թեան մը մէջ կը գտնուէին, այգեկութին հաս-
ցնելու թանկագին ողկոյզները:

Եւ որքան աւելի կը դիտէի ողկոյզներն ու
սաղարթախիտ ճիւղերը, այնքան աւելի կը
լուսաւորուէր իմ սիրտս և կը խայտար մեր
վերնագրին առջեւ. «Ես որթն եմ և Դուք ճիւ-
ղերն էք»:

Ուրեմն այս բոլոր ներդաշնակութեան գաղտ-
նիքն էր, որթին և ճիւղերուն ներքին յարաբե-

րուծիւնը: Մկրատը բեր, զանոնք իրարմէ բաժնէ, թող անոնք իրարու քով մնան եթէ կ'ուզեն, սակայն պիտի տեսնես որ քիչ յետոյ տեսարանը տարբեր գոյն պիտի առնէ և քանի մը օր յետոյ, տերեւները պիտի թառամին ու չորնան, պտուղները պիտի խորշոմին ու քարանան կամ աւրուին: Պարտիզպանը պիտի գայ, իր փառքին աւերակոյտին առջեւ կոտորած սրտով՝ խոր կսկիծով ձեռքը պիտի երկնցնէ, քաշէ ճիւղերը իրենց վրայ եղածներովը միասին, և տանի պարտէզին մէկ անկիւնը նետէ և զանոնք այրէ: Ի՞նչ տխուր տեսարան:

Բայց ինչո՞ւ կ'երեւակայեմ այդ տխուր տեսարանը, քանի որ այդ չէ՛ իրականութիւնը հոս և ի՞նչ է գաղտնիքը այս փառքին:

Ներքին կապը — յարաբերութիւնը — «մէկը»ութիւնը: Ինծի այնպէս կ'երեւի թէ որթատունկին ճիւղը չպիտի կրնայի անմիջապէս բունէն բնորոշել, այնքան որ անոնք նոյնամասն են նոյն բնոյթը կը կրեն: Որթը իր ճիւղերը հաստատուն կը բռնէ. առանց իրեն անոնք կոտորուած, դուրս ձգուած և կորսուած են: Զանոնք փտուած են կը պաշտպանէ, բունէն այդքան հեռու գտնուիլը իւրաքանչիւր ճիւղին համար վտանգ մըն է չորնալու և փտելու: Սակայն բունը իր տուած անունդին զօրութիւնովը զանոնք կենդանի և անփուտ կը պահէ: Անոնց շարունակական աճում կուտայ, զանոնք կը նորոգէ և կ'աճեցնէ ամեն օր, իր աւելին մակածականութեան օրէնքով բշխէ-բշխի շարունակական հաղորդելովը, այնպէս որ աւելը (կենսասիւթը) ճիւղերուն մինչեւ վերջին ծայրը, տերեւներուն ամենայետին կէտը կը հասնի՝ անոնց տալով հարկ եղած կենդանութեան զօրութիւնը: Որթը կեանք կուտայ, կը գեղեցկացնէ, կը պտղաբերէ զանոնք: Այս ամենը, որովհետեւ ճիւղին կապակցութիւնը այնքան սերտ է, այնքան մտերիմ, որ կարելի չէ նոյնիսկ բնորոշել զանոնք բաժնող որ եւ է միջոց մը:

Ի՞նչ կենդանի պատկեր մըն է այս, Քրիստոսի իր հաւատացեալներուն հետ ունեցած միաբանութեան: Ես որթն եմ և դուք ճիւղերն էք: Հաւատացեալը Քրիստոսի հետ մէկ է, քան զի Անոր հետ յարաբերութեան գալով, նոյն բնոյթին բաժնեկից է: Քրիստոս հաւատքով կը բնակի անոր սրտին մէջ, և զայն կը բռնէ, հաստատուն կը պահէ, հաւատարիմ կը պահէ: Զայն փտտութենէ, հեղզանալէ, թուլնալէ, թմրութենէ, անտարբերութենէ, հպարտութենէ, ինքնավստա-

հութենէ, եսապաշտութենէ, կը պահէ: Զայն կ'աճեցնէ օրէ օր իր շնորհքին մէջ և կը նորոգէ զայն, օրէ օր հարկ եղած ներքին սնունդը, — հոգեւոր ոյժը — տալով անոր, օրուան պարտականութիւնները ամենայն յաջողութեամբ և յաղթութեամբ կատարելու: Զայն կը գեղեցկացնէ Աստուծոյ առաքինութիւններովը և կը զարգարէ չոգիին պտուղովը: Քրիստոս հաւատացեալին մէջ է, Անիկա գիտէ հաւատացեալին օրական տրամադրութիւնը, օրական փորձութիւնները, տարբեր ժամանակներու մէջ անոր ունեցած տարբեր փոփոխութիւնները և անոր կուտայ ժամանակի և պարագաներու յատուկ զօրութիւնը, ինչպէս որ որթն ալ տարբեր ժամանակներու մէջ իր ճիւղերուն տարբեր բաղադրութիւններով աւելը զրկէ համաձայն իր պէտքերուն:

Ի՞նչ հոգածու Տէր, ի՞նչ փառաւոր Փրկիչ: Ասոր համար Քրիստոս մեր մէջ փառաց յոյսը: Ի՞նչ որ յիշեցինք, որթին և ճիւղերուն միջեւ եղած մտերիմ յարաբերութեան բնական արդիւնքն է: Այս է, քրիստոնէական կեանքի շարունակական աճումը, որ դէպի կատարելութեան կը ձգտի, ու այս կատարելութիւնը Յիսուսը ճանչնալուն մէջ կը կայանայ: Ուրեմն կրնանք ինքզինքնիս քննել որպէս ճիւղ և ճշդեւ մեր կեանքը և ճշդեւ նաեւ մեր դիրքը առ Քրիստոս, քան զի մեր կեանքի աստիճանը և յաջողութեան, յաղթութեան, սրբութեան կեանքը կախում չունի մեր անձնական սրբութենէն, հապա մեր Անուր մէջ ըլլալէն ու չըլլալէն, Քրիստոսի հետ մեր յարաբերութեան շարունակական պահպանումէն, կամ անոր խզումէն, մեր Անոր մէջ կենալէն կամ մեր անձնական ճամբան բռնելէն: Հարկաւոր է նկատել նաեւ աւելի պտուղի հարցը, որ կ'ենթադրէ կանխաւ մաքրուիլը — պարտիզպանի բառով յոտուիլը, կարեւոր տեղ մը կը գրաւէ որթատունկի պտղաբերութեան կեանքին մէջ: Յիսուս Քրիստոս Աստուծոյ մեզի իմաստութիւն եղած է, այսինքն արդարութիւն, սրբութիւն և փրկութիւն: Քրիստոսի այս բարձրագոյն գիտութեան հասնելու համար, հաւատացեալներու վրայէն դեռ շատ բաներ փրցուելու են, շատ բաներ տաշուելու են, նկարագրի շատ կողմեր փոխուելու են, խիստ շատ բաներ կան, որոնք յոտուելու են: Իր նախնական մեղքերէն չմաքրուող Աստուծոյ մէկ զաւակը պէտք չէ աւելի պտուղ տալու մասին խորհի: Պտուղը ճիւղին իր բունէն օգտուելու չափին համապատասխան է:

Այս պատճառաւ ալ սրբութիւնն ու կեանքի կատարելութիւնը առանց Քրիստոսի կարելի չէ

ենթադրել ու երեւակայել: Քրիստոս միշտ պէտք է մեզի յաղթութեան և պաղարեւութեան և կատարելութեան համար: Առանց ինծի բան մը չէք կրնար ընել: Քրիստոս հաւատացեալին համար ամեն վայրկեանի անհրաժեշտութիւն մըն է: Չէ կարելի երեւակայել հաւատքի գործ մը Քրիստոսէ դուրս:

Յ. Ն. Ղ.



ՔՐԻՍՏՈՍԻ ՀԵՏ ՆՈՅՆԱՆԱԼ

«Ճանչնալու և Անիկա»

ՓԻԼ. 3. 10, 11

Ասիկա յառաջացեալ ու հասուն ճանաչում մըն է: Պօղոս չգոհանար Քրիստոսի զպրօցին մէջ արձանագրուելով միայն, այլ իր ընթացքը պատուով աւարտելով՝ բարձրագոյն աստիճանի մը հասնիլը անհրաժեշտ կը սեպէ: Զբաւականանար հոգեւոր հմտութեան արմատներով ու շրջագիծով միայն, ինքզինք կը պարտադրէ աստիճանէ աստիճան բարձրանալու, քոյ քոյի ետեւ վերցնելու և Աստուծոյ շնորհքին ու սիրոյն գաղտնիքներուն խորերը թափանցելու: Այս հրավառ տենչն ըլլալու է ամէն քրիստոնէի յատկանշականը: Սակայն դժուարութիւնը հոս է որ մեզմէ շատերը առաջին աստիճանին հասնելէ վերջ՝ հոն կը մնան ու այս հրատապ բաղձանքը չունենալուն համար՝ երկրորդ աստիճանին չեն բարձրանար: Մենք չենք ածիր մեր Տէր ու Փրկիչ Յիսուս Քրիստոսի շնորհքին ու գիտութեանը մէջ: Այսպէս մեր տարիքը կը յառաջանայ թէպէտեւ, սակայն մտաւորապէս ու հոգեւորապէս մանկութեան զգեստներ կը կրենք: Երկիւղածութեամբ կ'ըսեմ՝ արդեօք որչափ ողորմելի ու ալիւնդակ կ'երեւանանք ուրիշներու, նման չափահաս մէկի մը, որ փոքրիկի մը հազուատներն հազած կը պտտի: Առաջին աստիճանին վրայ մնալով՝ Տէրոջը մասին մեր կազմած գաղափարները պզտիկ կը մնան, մեր համակրանքը սահմանափակ, մեր աղօթքները անձուկ ու միօրինակ, նոյն տեղը կը կենանք: Խղճալի զաճաճներ կը ներկայացնենք: Բայց Պօղոս հոգեւոր գիտութեան մէջ զարգանալու եռանդով, շնորհէ շնորհք, զօրութենէ զօրութիւն, փառքէ փառք կը յառաջանայ: Իւրաքանչիւր նոր ըմբռնում

նոր հիացում կ'արթնցնէ իր մէջ ու իւրաքանչիւր հիացում ալ աւելի կը սաստկացնէ անոր հետագօտելու եռանդը: Ամէն մէկ օր նոր զարմանքով կ'ըլեցնէ զայն ու օրէ օր իր առջեւ տարածուած կը տեսնէ «Քրիստոսի անքննելի ճշմութեան» երկիրները, որոնց վրայէն տակաւին ոչ մէկ ոտք քալած է: «Եւ Անոր յարութեան զօրութիւնը»: Պօղոսի նպատակն է նաև ճանչնալ Քրիստոսի յարութեան զօրութիւնը, զոր Քրիստոսի մէջ միայն կրնայ գտնել: Շատեր կրնան թուել Քրիստոսի յարութեան ապացոյցները, բայց բոլորովին անձանօթ են Անոր զօրութեան: Անոնք տեղեակ են պատմական իրողութեանց, սակայն Անոր յարութեան իրականութեան զօրութիւնը չեն իրականացներ իրենց մէջ: Չեն տարակուսիր արեգակին գոյութեան, բայց անձանօթ են անոր բեղմնաւորիչ ջերմութեան: Չեն տարակուսիր Յիսուսի յարութեան, սակայն այս ճշմարտութիւնը կնքուած չէ իրենց սիրտերուն մէջ:

Արդ՝ Պօղոսի տենդոտ բաղձանքը ոչ թէ միայն Քրիստոսի յարութեան իրողութիւնը՝ այլ այդ իրողութեան զօրութիւնը ճանչնալ է: Անիկա հասկցած էր թէ Քրիստոսի յարութեան մէջ սքանչելի ուժեր ի գործ դրուած էին, որոնց ուժգին հոսանքին առջեւ երբ անգամ մը ելլէր, անոնց ուժգնութենէն վեր պիտի նետուէր, իր ետեւ թողով ամէն ինչ որ զինք կապած ու մահուան դատապարտած էր: Եթէ մէյ մը կարենար նոյնանալ այն անձնաւորութեան հետ՝ որ մահուան նիզերը կտտրելով գերեզմանէն դուրս ելաւ, ոչ մէկ գերեզման այլեւս կարող պիտի ըլլար նաև զինք պահել՝ հոգ չէ թէ անոր կապանքները բարոյական թէ նիւթական ապականութիւններ ներկայացնէին: Իր նորոգութեան ուժը գտնելու էր Տէրոջը յարութեան զօրութեանը մէջ: Ուստի ամէն փոքրագոյն գործառնութիւններ, ինչպէս ստորին հարստութիւն ու զարգացման ջանքեր և բարեկամութիւններ ստորադաս սեպեց և ամէն ինչ փնաս, որպէսզի միանար Աստուծոյ գերադրական զօրութեան, զոր Անիկա ի գործ դրաւ Քրիստոսը մեռելներէն յարուցած միջոցին:

«Ու Անոր չարչարանքներուն հաղորդ ըլլալը»: Ահա Առաքեալին փառասիրութեան մէկ երեւոյթը, որ մեզ զարմացման կը մատնէ: Կարելի է հասկնալ անոր, իր Փրկչին յարութեան զօրութեանը մասնակից ըլլալու հրավառ բաղձանքը, սակայն զարմանալի չէ՞ որ նոյնքան տենչայ մտերմանալու նաև իր Տէրոջ տաքնապներուն: Այո, բայց կարելի չէ բաժանորդ ըլլալ

Անոր յաղթութեան առանց մասնակից ըլլալու նաև Անոր չարչարանքներուն: Ոչ մէկը որ Տէրոջը փորձութեանց մէջ բաժին ունեցած չէ, կրնայ մտնել Անոր ուրախութիւնը: Երբ Զերեգէոսի որդիները խնդրեցին որ իրեցմէ մէկը իր աջ կողմը ու միւսը իր ձախ կողմը նստէր իր թաթառորութեան մէջ, Տէրը երեւութապէս պաղ ու անշնորհալի կերպով պատասխանեց, «Կրնա՞ք խմել այն գաւաթը զոր ես կը խմեմ»: Սակայն Անոր պատասխանը շնորհքով ու լոյսով լեցուն էր: Անոր գահին բաժանորդ ըլլալու համար նաև բաժանորդ ըլլալու ենք Անոր գաւաթին:

Եթէ մասնակցիլ կ'ուզենք հնձողներու զուարթ երգերուն, մասնակցելու ենք նաև հերկելուն ու ցանելուն: Եթէ Տէրոջը հետ մեր սիրտերուն խորերէն ուրախանալ կ'ուզենք կորսուածի մը գտնուելուն համար, կորսուածին ետեւէն երթալու ենք: Ընտիր քաղցրութիւնը ճաշակելու համար նախ դառնութեան համն առնելու ենք: Այսպէս Առաքեալը կը ձգտի Անոր չարչարանքներուն հաղորդ ըլլալու: Յարութեան առաւօտեան լոյսը, շերմութիւնն ու փառքը աւելի լաւ գնահատել կարենալու համար, կ'ուզէ ընկերանալ Անոր մոլթ ու նեղ ճամբաներուն մէջէն պաղ ու ամէն մարդէ թողուած Գեթսեմանիի մէջ, ու մազլիլ Գողգոթայի բլրակն ի վեր: «Անոր մահուան կերպարանքը առնելով»: Անոր մէջ կը կայանայ անհատի մը իր Տէրոջ հետ նոյնանալու խորհուրդին ամենէն խոր ու ներքին զաղտնիքը: Կրնանք այն աստիճանի ձուլուիլ Քրիստոսի հետ, այնքան ճանչնալ Զայն ու այնքան նոյնանալ Անոր հետ, որ Անոր աննկարագրելի զոհաբերութեան ու մահուան զօրութիւնը մեր ալ ոյժն ու զօրութիւնը ըլլայ: Այս զաղտնիքը պարզ աչքով տեսնելու անկարող ըլլալնու համար, վախճալու և նեղուելու պէտք չունինք: Ոչ ալ հեռաւոր մթնոլորտներ թափանցելու անկարող ըլլալնու համար անհանգիստ զգալու հարկ կայ: Հաւատքով Քրիստոսի մէջ կենալ և անդադար Անոր կամքին յանձնուած մնալ կը նշանակէ Անոր նման ըլլալ և Անոր հետ նոյնանալ: Նոյնանալ Անոր անձին հետ, նոյնանալ Անոր ամէն ըրածներուն հետ, նոյնանալ այն բաներուն հետ, զոր պիտի ընէ ապագայ դարերու մէջ: Մեր Անոր հետ ունեցած միութիւնը պիտի պարունակէ Անոր ժառանգութեան ճիւղութիւնը և Անոր զոհաբերութեան ուժն ու բաւականութիւնը: Իր եղբայրներուն համար զոհուելու և անոնց փրկութիւնը փնտռելու շնորհալի յօժարակամութիւն մը տեսնելով պիտի ցուցնենք թէ Անոր տարրակից

ենք: «Անոր մահուան կերպարանքը առնելով, որ ըլլայ թէ մեռելներէն յարութեանը հասնիմ»: Մէկ Անոր հետ մահուան կերպարանքով ու մէկ յարութեան կերպարանքով:

Թարգմ. Ն. Մ.



ՏԵՐՈՋԸ ՆՊԱՏԱԿԸ

ԻՄ ՄԱՍԻՍ

ՄԱՍԻՍ

Սակայն ամէն բանի վախճանը մօտեցեր է. ուստի զգաստ եղէ՛ք ու աղօթքի մէջ արթուն կեցէ՛ք: Ա. Պետ. Դ. 7

Անցած ամիսներուն մէջ օր մը արտաքին ու ներքին գործերով խիստ շատ յոգնած ըլլալով՝ ուզեցի քանի մը վայրկեան մտքով ու մարմնով հանգչիլ: Երբ հանգստութեանս միջոցին պարտականութիւններու վրայ կը մտածէի, ինքնիքնս ըսի. «Հոգեւոր գործին մէջ ինծի ինկած պարտականութիւնը այս քանի մը վայրկեաններուն մէջ կարողութեանս չափովը ըրի, քիչ մըն ալ արտաքին գործերու ձեռնարկելով՝ այն պարտականութեանս հետեւիմ»: Առջեւ ունէի կիսահատ հագուստ մը, որու կտորները պէտք էր յարմարցնելով կարէի: Երբ կը խորհէի թէ այս ինչ մասը ասանկ դրուելու է, ճիշդ այդ միջոցին սրտիս մէջէն ուրիշ մեղմ ձայն մը զգալիօրէն յայտնեց ինծի թէ աղօթքի շատ ատեն տալու է:

Արդեօք ի՞նչ էր Տէրոջը նպատակը: Անիկա զիս ալ աւելի սրբացնելու համար և կամ թէ իր զբաղման անկիւնին մէջ զիս աւելի եռանդուն և արդիւնաբեր ընելու համար իր Հոգիին ներկայութիւնովը աւելի զօրացնել՝ կ'ուզէ: Արդեօք աղօթքի կեանքին իրական զաղտնիքը ինծի հասկցնել կ'ուզէ: Քիչ մը խորհեցայ ու որոշեցի ամէն ատեն և ամէն պարագայի տակ Տէրոջը ծառայել: Յետ այսու Անոր կանոնները պահել իմ առօրեայ որոշումս և ներքին կեանքիս բնական ընթացքը ըլլալու է: Ու ես եկայ այն եզրակացութեան թէ՛ եթէ մենք մեր առջեւը դրուած հոգեւոր պարտականութիւնները կատարելէ յետոյ՝ նաեւ մեր բոլոր առօրեայ գործերն ալ ծունկի վրայ եկած Անոր ներկայութեան մէջ ընելու ըլլանք, այն ատեն Տէրը մեր բոլոր գործունէութեանց պիտի հաճի և մեր արտաքին պարտականութեանց միջոցաւ ալ Քրիստոս պիտի

փառաւորութիւն և հոգիներ իրենց Փրկչին պիտի դառնան և հաւատքին հնազանդին:

Երանի՛ կարենայինք սորվիլ միշտ մեր Տէր Յիսուսի ձեռացը տակ Անոր սուրբ կամքը ճանչնալ և հեզ ու խոնարհ Անոր հպատակ ըլլալ:

Բոլոր սրտով համոզուեցայ թէ ամէն դասակարգէ եղող սիրելի քոյրերու իրաւունքն ու կոչումն է վերոյիշեալ փառաւոր ծառայութիւնը մատուցանել Աստուծոյ թաղաւորութեանը մէջ: Եւ անոնք որ այսպէս հաւատարմաբար օրական գործերու մէջ հոգիով կը քալեն, Տէրը գալիք օրերուն և տարիներուն համար ալ իր հաճութեանը համեմատ աւելի օրհնաբեր պատենհութիւններով պիտի զօրացնէ զանոնք, կեանքը այս կերպով աւելի ուրախ երեւոյթ մը պիտի ստանայ և մեր գործերէն յաւիտենականութեան համար իրական պտուղներ երեւան պիտի գան:


Աղօթքով ձեր տկար քոյրը

ԵՈՒՆԻԱ ԼԱՉԱՐԵԱՆ

Փէսէտինա-Գալիֆօրնիա



ՇՈՂԵՐ ԵՒ ՇԱՂԵՐ



ԿԵՆԱՑ

ԱԾՈՒՆԵՐԷՆ

ՔԱՐՈՉԸ ԻՆՉՈՒ ԿՐԿԻՆ ԳՐՈՒԵՑԱԻ

Դիւղի մը մէջ աշխատող շատ ուսեալ քարոզիչ մը այն տպաւորութիւնը ունեցաւ որ իր քարոզները ունկնդիրներուն վրայ ուղիղ ազդեցութիւնը չէին կատարեր. ուստի որոշեց փորձ մը ընել: Յաջորդ Կիրակնօրեայ համար բարոզ մը գրելով իր երիտասարդ բայց անուս սպասուհին կանչեց և անկէ քանի մը նախադասութիւններ կարդաց ու յետոյ հարցուց՝ զրուածը հասկցա՞ր: Նա հասկցած չէր: Քարոզիչը պարզեց իր քարոզը և կրկին կարդաց: Անոր պատասխանը այս անգամ աս էր «Քիչ մը աւելի լաւ կը հասկնամ»: Քարոզիչը ասով չգոհացաւ, քարոզին ոճը աւելի պարզ ըրաւ և երբ զայն կրկին կարդաց, աղջկան երեսը փայլեցաւ ու ըսաւ «Ասիկա ինձի յատուկ է»: Այս քարոզին ամպիոնէն քարոզուելու հետեւանքը այն եղաւ որ անոր միջոցաւ հինգ հոգիներ Փրկչին եկան:

Փոքր բոռեր մեծ նշանակութիւններ կրնան ունենալ և պարզ քարոզներ մեծ արժէք ունին: «Այնպէս պարզ խօսէ, որպէս զի դիւրաւ հասկնամ»:



ՊԱՐԱՍՐԱՀԻՆ ՄԷՋ ԱՊԱՇԽԱՐՈՒԹԵԱՆ ԵՐԳ

Դար մը առաջ Մակաէպուրկի մօտ ապրող հաւատացեալ հարուստ ազնուական մը իր Տէրոջը հոգիներ շահելու մէջ մեծ եռանդ ցուցուց և հոգեւոր զրութիւններ տպելով ցրուելու համար մեծ գումարներ յատկացուց: Օր մը հարուստ գիւղի մը մէջէն անցած պահուն նշմարեց որ հոն պարահանդէս մը տեղի կ'ունենար: Նա ճաշարանը մտաւ բան մը խմելու համար ու ետքը պանդոկապետին հարցուց թէ արդեօք կրնա՞ր պարողները դիտել: Սիրով թոյլ տրուեցաւ, ուստի նա պարասրահը մտաւ և դրամ մատուցանելով նուագողներէն խնդրեց որ անգամ մըն ալ իր ուզած մէկ կտորը նուագեն: Ո՞վ կրնայ երեւակայել պարասրահի մարդոց անակնկալ զարմանքը, երբ սրահին մէջ լսելի եղաւ ապաշխարութեան երգի մը եղանակը, որուն կը ձայնակցէր ազնուականը խօսքը երգելով: Ոմանք բարկութեամբ դուրս ելան, իսկ մնացողներուն այս օտարականին ազդեցիկ ուղերձը այնպէս օրհնութիւն եղաւ որ գիւղին մէջ հոգեւոր արթնութիւն մը յառաջ բերաւ ու շատ մը հոգիներու փրկութեան պատճառ եղաւ:

Ո՞րք են այսօր այսպիսի ազնուականներ, աշխարհը անոնց կը կարօտի:



ՆԵՐԵԼ

Յրանսայի թագաւորը Լուի ԺԲ. դեռ իշխան, շատ մը թշնամիներ ունէր: Երբ գահը ելաւ, իր բոլոր թշնամիներուն անունները թուղթի մը վրայ արձանագրել տուաւ և իւրաքանչիւր անունան առջեւը սեւ մեկնով խաչ մը նշանակեց: Իր թշնամիները ասիկա լսելուն պէս անմիջապէս փախան, կարծելով թէ թագաւորը որոշած է զիրենք սպաննել: Անոնք խորհեցան թէ այս խաչը իրենց գերեզմանին խաչը կը նշանակէ: Երբ թագաւորը անոնց փախուստը իմացաւ, անոնց իրեն վստահելու խորհուրդը ներշնչելով, կանչեց իր առջեւ: Անոնց հետ քաղցրութեամբ խօսեցաւ ու ըսաւ «Բարեկամներ, հանդարտ եղէք, չէ՞ք գիտեր թէ խաչը ներման նշանն է: Ձեր անուններուն առջեւ խաչին նշանը դրի, որպէսզի

միշտ Գրիստոսի խաչը և Անոր խաչին վրայ ըսած այս խօսքերը մտաբերեմ «Հայր, թողութիւն տուր ատոնց, վասնզի չեն գիտեր ինչ կ'ընեն»:

Մեր թշնամիներուն բոլոր սրտով ներել խիստ կարեւոր է, քանզի Աստուծոյ մեր ներում գտնելը ասկէ կախեալ է:



ՉԱՐՄԱՆԱԼԻ ԾՐԱՐ ՄԸ

Պատուելի մը օրին մէկը զարմանալի ծրար մը ստացաւ, որուն մէջ սուր քար մը, 300 մարք և ուսանողի մը նամակը կար: Երիտասարդը անգործ մնացած էր և ուր որ դիմած՝ մերժուած էր: Վերջապէս մեծ յուսահատութեան մէջ իյնալով սա սոսկալի որոշման եկած էր թէ՛ յաջորդ դուռը զարնելուն, եթէ կրկին անտարբերութեամբ մերժուելու ըլլայ, դուռը եկողը պիտի զարնէ ու բանտը իյնալով գոնէ ցամաք հաց մը ուտէ: Այն գուռը պատուելիին դուռն էր:

Նամակին մէջ այսպէս գրուած էր. «Դուք քաղցրութեամբ և սիրով ինձ մօտենալով դիմ իմ չար որոշումէս ետ կեցուցիք: Զիս ձեր տաքուկ սենեակը հրաւիրելով բազմոցին վրայ նստեցուցիք և կարեկցութեամբ իմ վիճակ հարցուցիք: Զիս իրիկուան ճաշին հրաւիրեցիք և երբ կը բաժնուէի, ափիս մէջ 10 մարք դնելով ամենալաւ մաղթանքները ըրիք: Մեծ գումար մըն էր այդ ինծի, սակայն աւելի թանկագին էր Զեր յօժար սիրտը, քանզի տեսայ թէ դուք ալ աւելի բան մը չունէիք: Զեր մաղթանքները կատարուեցան, և երբ որ ետքը լաւ վճարուածով գործ մը գտայ: Խնայելու սկսայ մինչեւ որ այս 300 մարքը մէկ կողմ դրի: Այս գումարը Զեզի կը ղրկեմ Զեր ըրած ողորմութեան ի փոխարէն: Այդ սկսած գործս ալ մինչեւ այսօր կը շարունակեմ»:

Այս նամակէն ի՞նչ կը սորվինք:



ԱՍՏՈՒԱԾ ԿՐՆԱՅ ՕԳՆԵԼ

Գրիստոսեայ մայր մը 1933 ին վերնադրին ստոյգ ըլլալը զարմանալի կերպով փորձառաբար հասկցաւ: Անոր տասներմէկ տարեկան աղջիկը լողանքէ մը յետոյ պաղ առած էր և շատ տաքութիւն ունէր: Երկու օր վերջը տաքութիւնը մէկէն իջաւ, բայց աղջկան ձայնը դադրեցաւ և վիզը անշարժ մնաց: Ամէն տեսակ մարձանք

(շփել) և Բ ճառագայթները եւս անօգուտ եղան: Ասանկ երեք ամիսներ անցան, աղջկան ձայնը չէր ելլեր և զուիւր ծած էր դէպի մէկ ուսը: Օր մը մայրը իր զաւակին համար աղօթելու առաջնորդուեցաւ՝ Ա. Յովհ. Տ. 14-15 ի համեմատ: Նա իր Սուրբ Դիրքը առաւ և իր աղջկան անկողինին քով ծունկի վրայ եկաւ ու մանկան պէս, պարզ հաւատքով Տէրոջը այս խոստումը բռնելով խնդրեց որ իր զաւակին ալ օգնէ: Բիշ ատենէն ետքը երբ աղջիկը հայելիին առջեւ կեցաւ, փսփսալով ըսաւ, «Մայրիկ, վիզս շիտակ կը կենայ» և անանկ էր: Քանի մը օր վերջն ալ ձայնը տեղը եկաւ: Տէրը այս բանը ըրած էր մօրը հաւատքով ըրած աղօթքին ի պատասխան:



Ի՞ՆՉ ԸՆԵԼՈՒ ԵՆՔ ՈՐ ԴԱՏԱՊԱՐՏՈՒՆՔ

Ուսուցիչ մը Սուրբ Դրքի դասին մէջ մանուկներուն հարցուց, «Ի՞նչ ընելու ենք որ դատապարտուինք»: Աշակերտները զանազան պատասխաններ տուին: «Մարդ սպաննելու ենք», «Ձղջալու չենք»: «Դարձի գալու չենք», եայլն: Բայց անոնցմէ մէկուն պատասխանը սա էր, «Դատապարտուելու համար բան մը ընել պէտք չէ»:

Կարելի է պզտիկը իր խօսքին ճիշդ նշանակութիւնը չէր հասկնար, բայց անոր խօսքը ուսուցիչը խորհիլ տուաւ: Կորսուելու համար կը բաւէ, եթէ մնանք այնպէս ինչպէս որ ենք: Քանզի Յովհ. Գ 36 ի համեմատ ամէնքս ալ Աստուծոյ բարկութեանը տակն ենք: Ուստի աճապարէ դարձի գալու:

Հաւաքեց՝ Ժ. Կ. ՊԱՐՍՈՒՄԵԱՆ

.....

ԱՆՕԳՈՒՏ ԱՇԽԱՐՀԸ ԹՈՂՈՒԼ



Մարդ մը Մուտի կը հարցնէ. «Հիմա որ ապաշխարեցի, արդեօք պէ՞տք է որ աշխարհը թողում»:
— «Ո՛չ», կը պատասխանէ Մուտի, «այդ նեղութիւնը քաշելու պէտք չունիս, եթէ դուն աշխարհի որոշ և պարզ վկայութիւն մը տաս Աստուծոյ Որդւոյն փառքին համար, արդէն աշխարհ չուտով քեզ պիտի թողու — անոնք քեզ պիտի չուզեն»:
«Գու՛ն աշխարհէ չես»:
(Յովհ. Ժէ 14):



Ս. ԳՐԱԿԱՆ
ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ

Քաղեց՝
SCOFFIELDԷՆ
Վ. ՍԱՀԱԿԵԱՆ

ԱՆՀԱՏ ՀԱՒԱՏԱՅԵԱԼԸ ԵԿԵՂԵՑԻՆ ՄԵՋ

— 0000 —

Մատթ. ԺԲ 46-50ի դէպքը կարելի է նկատել իբր օրինակ մը Յիսուսի «Իր մարմնի կողմանէ եղբայրներէն» Իսրայէլէ մերժուելէ յետոյ՝ Անոր կազմել սկսած նոր ընտանիքին։ Միայն ցեղակցական իրաւասութիւնները մէկդի դնելով մեր Տէրը կ'ընդունի «Հաւատքի ընտանիքին» մէջ իր երկնաւոր Հօրը կամքը կատարող «Ով որ» ներ։ Այլեւս ազգականական կապը կազմող կենսանիւթը հաւատքն է։ Հաւատքը ամենէն անհատական և ամենէն անհրաժեշտ յարաբերութիւնն է անհատ հաւատացեալին իր Տէրով հետ։ (Եբր. ԺԱ 6) հաւատքի էութիւնը կը կայանայ Աստուծոյ յայտնութիւնը ընդունելու մէջ։ Սուրբ Գրոց Աստուծոյն և Անոր զրկած Յիսուս Քրիստոսի վրայ այն վստահութիւնը, որ զԱյն կ'ընդունի իբր Փրկիչ և Տէր և ներքին մղիչ ուժով մը կը մղէ հաւատացողը իր Տէրով հնազանդելու սիրոյ հնազանդութեամբ և բարի գործերով։ (Յովհ. Ա 12, Յակ. Բ 14-26) Հաւատքի զանազան գործածութիւններն են՝ 1.— Փրկութեան համար՝ հաւատքը անհատական վստահութիւնն է Տէր Յիսուս Քրիստոսի վրայ թէ Անիկա «Մեր (իմ) յանցանքներուն համար մատնուեցաւ, և մեզ (զիս) արդարացնելու համար յարութիւն առաւ. (Հոով. Դ 23-25)։

2.— Աղօթքի մէջ՝ հաւատքը «այն համարձակութիւնն է զոր մենք Անոր քով ունինք, որ ինչ բան որ խնդրելու ըլլանք Իր կամքին համեմատ, կը լսէ մեզի. (Ա Յովհ. Ե 14, 15)։

3.— Սուրբ Գրոց խօսած «չերեցած բաներուն» նկատմամբ հաւատքը անոնց հաստատութիւն «թանձրացում» կուտայ՝ (Եբր. ԺԱ 1-3), այնպէս որ մենք այդ չտեսնուած բաներուն վերաբերմամբ զանոնք տեսնողի նման իրականութեամբ և վստահ համոզմամբ քայլեր կ'առնենք. (Եբր. ԺԱ 9, 19, 27. Հոով. Դ 18-21)։

4.— Կեանքի մէջ հաւատքին իբր գործունեալ

սկզբունք՝ անոր գործածութիւնները պատկերացուած են Եբր. ԺԱ 1-39ի մէջ։

Հաւատացեալին կեանքի օրէնքը սէրն է։ Քրիստոսի օրէնքը. (Գաղ. 2 2, Բ Յովհ 5)։ Այս նոր օրէնքը, Աստուածային սէրը Սուրբ Հոգիին միջոցաւ նորոգուած սրտին մէջ կը զրուի և կը ներգործուի. (Հոով. Ե. 5, Եբր. Ժ. 16) Ս. Հոգւոյն միջոցաւ այս սէրը հաւատացեալին սրտէն դուրս կը հոսի, ինքնաբերաբար, առանց բռնազբօսիկ ջանքերու, դէպի այն անձերն ու առարկաները, որոնք Աստուծոյ սիրոյն առարկաներն են. (Բ Կոր. Ե 14-20, Ա Թեա. Բ 7, 8)։ Ուստի այս սէրը «Ազատութեան օրէնքն» է (Յակ. Ա 25, Բ 12) և համապատկերն է Մովսէսի արտաքին օրէնքին։ Մովսէսի օրէնքը սէր կը պահանջէ. (Ղեւտ. ԺԹ 18, Բ. Օր. 2 5, Ղուկ. Ժ 27) Քրիստոսի օրէնքը սէր է, (Հոով. Ե 5, Ա Յովհ. Դ 7, 19, 20)։


Պէտք է որոշ զանազանութիւն ընել հաւատացեալին Աստուծոյ ընտանիքին մէջ Քրիստոս Յիսուսով ունեցած դիրքին՝ և անոր քալուածքին կամ հոգեւոր վիճակին միջեւ։ Քրիստոնեային դիրքը շնորհքի մէջ Քրիստոսի կատարած գործին արդիւնքն է։ Հաւատացեալը այս դիրքին կատարելութեան մէջ կը մտնէ այն վայրկեանին երբ նա հաւատքով Քրիստոսը կ'ընդունի. (Յովհ. Ա 12, 13, Հոով. Ը 1, 15-17, Ա. Կոր. Ա. 2, 30, ԺԲ 12, 13, Գաղ. Դ 26, Եփես. Ա 3-14, Բ 4-9, Ա Պետ. Բ 9, Յայտն. Ա 6, Ե 9, 10)։ Ամենէն տկար, ամենէն սղէտ, ամենէն սխալական հաւատացեալն ալ Աստուծոյ հետ ճիշդ ու ճիշդ նոյն ազգականական կապերը ունի շնորհքի մէջ, որքան ամենէն նշանաւոր սուրբը։ Իսկ ասկէ յետոյ Աստուած գործ կ'ունենայ իր զաւակներէն իւրաքանչիւրին հետ, անոր վրայ և ի նպաստ նպատակ ունենալով հաւատացեալին նկարագիրը կերտել և զայն յարմարցնել անոր Քրիստոսի մէջ ունեցած բարձր դիրքին։ Նա կ'ածի «շնորհքի մէջ» բայց ոչ «առ շնորհք»։ Այս նպատակին հասնելու համար Աստուծոյ գործածած միջոցներէն ոմանք են, Իր խօսքը ազդելի ընել մեր քալուածքին և խղճին վրայ (Յովհ. ԺԷ 17, Եփես. Ե. 26) Աստուածային խրատիչ պատիժներ. (Ա Կոր. ԺԱ 32, Եբր. ԺԲ 10), Սուրբ հոգիին գործունէութիւնը, (Եփես. Դ 11, 12), ճամբու դժուարութիւններն ու փորձութիւնները, (Ա Պետ. Դ 12, 13) և վերջապէս Քրիստոսի գալուատենը մեր կերպարանափոխումը, (Ա Յովհ. Դ 2)։ Ա. Կոր. Ա 2—9 և 10—13 կը պատկերացնեն (կարծես նոյնիսկ իբր հակապատկեր) հաւատացեալներուն դիրքի և վիճակի այս զանազանութիւնը։

Աստուծոյ զաւակը կրնայ վիճակի կամ քալ-

ՏԱՌԱՊԱՆՔԻ ԵՐԳԵՐ
.....

ՑԱԻՒՆ ԴԵՐԸ

«Վառնգի մեր վայրկենական թեթեւ նեղութիւնը՝
սուտեւ քան զառաւել փառաց յաւիտենա-
կան գերազանցութիւն կը գործէ»:
Բ. Կորնթ. 4. 17



Դիշերներու հոգեսարսուռ խաւարին մէջ պակուցիչ՝
կը յօրինուին ծով-լոյսերու արշալոյսներ անապակ-
եւ փուք-խորան ձրմեռներու տաշրալուծող ձիւնին տակ՝
վերազարթնող եղեմական, նոր գարուններ յանգուցիչ:

Եւ որպէսզի աւազահատն դառնայ անգին մարգարիտ՝
Արուեստագէտ ոստրէն յօժար դիւծագին պէս կը մեռնի՝
Թրթուրն ինքզինք գերեզմանահ՝ խոզակին մէջ կը Յգնի՝
Մինչեւ փոխուի ազատ կեանքի ոսկի-թիթեռ Տշմարիտ:

Անկոփ մարման՝ կուռ կըռանի հարուածներու տակ հուժկու՝
կըրնայ դառնալ փառքի կոթող, գըլուխ-գործոց մ'անուանի.
Գըրաւջօրէն վըսեմացած հոգիներն ալ գեղանի՝
կոփուած են լո՛ւռ, տառապանքի բըռունցքներէն ահարկու:

Բորբ կըրակն է որ կը զըտէ կըղկըղանքով խառն ոսկին,
Եւ որպէսզի ապականեալ, մահկանացու, հողեղէն
Մեր երկրաքարշ գոյութիւնը դառնայ ընդմիշտ հրերէլէն՝
Աստուածավառ քուրայի մը պէտքը ունի մեր հոգին:

Երկամ-ոտքով, փարոս-գըլուխ սուրբ հերոսները բոլոր՝
Տագնապալից եւ արիւնոտ երկունքներէ դուրս եկան:
Ո՛վ Գողգոթա, խաչիդ վըրայ դարբնընեցաւ յաղթական՝
Մահապարտիս աստուածակերտ «յարութիւնը» փառաւոր:

∴

Ա՛րդ, Մատեանին եւ բընութեան հետ՝ հարց կ'ուտամ անվարան,
— Ո՛ւր է ո՛վ մահ քու խայծոցըդ, եւ յաղթութիւնդ ո՛վ շիրիմ,—
Ծոցըդ պառկող կենսաչարսար Ախոյեանը ռիւերիմ՝
Ձքեզ դարձուց անմահութեան խորհրդաւոր սաղմնարան...

ՍԱՄՈՒԷԼ Գ.

ուածքի տեսակէտով Աստուածապաշտութեան կուռ
զարգացում ունենալ և աճիլ ու չափահասութեան
մէջ կատարելութեան հասնիլ: (Մատթ. Ե 48):
Բայց ոչ առանց մեղքի եղած կատարելութեան:
Մատթ. Ե 48ի կատարելութիւնը հօրը բարու-
թեան կատարելութիւնն է (Հ. 44, 45) և ոչ թէ
Անոր առանց մեղքի կատարելութիւնը: (Ղուկ.
2 35, 36, Եփես. Դ 12, 13):

Յ Դատելու մէջ խոհեմ ըլլալը հասուն հոգեւո-
րութեան մը ապացոյցն է:

Լուտեր

≡

Յ Ամենապատուական մարդիկ դատողութեան
զգացումը կը կորսնցնեն, երբ առանց սիրոյ
կը վարուին:

Լուտեր

ՅԱՐՈՒԹԵԱՆ ՅԵՏ ԱՐՁԱԳԱՆԳ

ՅԱՐՈՒԹԵԱՆ ՄԱՐՄԻՆԸ

(Քաղուած Վեր. Ա. Զ. Եղոյեանի մէկ քարոզէն, արտասանուած Կիւրակի 28 Մարտ 1937

Բէսէտինայի եղբայրութեան ամպիոնէն)

Ա. Թեա. Դ 13, Ա. Կորն. ԺԵ 12-58:

Մահը մարդկային կեանքի գոյութեան վերջակէտը չէ: Երբ մարմինը հողին մէջ կը դրուի, վերէն դրուած սերմը իր մէջը կը մնայ: Երբ որ յարութեան ժամանակը գայ, ոչ մի զօրութիւն կրնայ այդ երկնային սերմը հոս արգելափակել: Այն արեգակը որ պիտի ծագի, գայն պիտի ծլեցնէ և իրեն պիտի քաշէ:

Այս գաղտնիքը Աստուած յայտնեց Յիսուսով: Յիսուս յայտնեց «Ներկայ եղող անմահութիւնը»:

Աստուածաշունչին մէջ, մարմինին անմահութեանը մասին կը խօսուի, ոչ թէ հոգիին և շունչին. քանզի հոգին արդէն անմահ է: Մեղաւորին հոգին անմահ է յաւիտենական տանջանքի եւ փրկուածին հոգին յաւիտենական կենաց համար: Յարութեան վարդապետութիւնը Իսրայէլի ժողովուրդին յայտնուած չէր հիմակուան պէս, մասնաւորները միայն լուսաւորուած էին այս ճշմարտութեան մասին, ինչպէս Ենովքի, (Յուդա 14), Յորի ԺԺ 25-27, Դանիէլի ԺԲ 2 և այլոց: Բայց լման յայտնութիւնը միայն Պողոս առաքեալին եղած է: «Ժողովողի» պէս մարգարէները ամպերուն տակին մասին միայն կը խօսէին և այդ կերպով շիտակ ալ էին:

Նոր Կտակարանը ամպերէն վերինին մասին կը խօսի: Բնաշնչական վարդապետներուն չին Կտակակարանէն բերած վկայութիւնները, եթէ այսպէս հասկնանք, չենք շուարիր: Շատերը այս հոգէ շինուած մարմինը կ'անարգեն: Բայց այս հիղէ ամանը նոյն իսկ Տէրոջը առեւ պատուական է, այնքան որ Տէրը նոյն մարմինը առաւ և անոր համար իր արիւնը թափեց: Սբ. Հոգին ալ անոր մէջ կը բնակի. Ա. Կորն. Զ 19: Ուստի այս հոգէ ամանը պէտք չէ անարգել: Մեղքը միայն գայն կ'անարգէ: Կ'արժէ գայն ընծայել Աստուծոյ, Հոռով. ԺԲ 1: Ասիկա խելացի գործ մը և բանաւոր պաշտամունք մըն է: Ի՞նչեւ ատեն մը վերջը այս մարմինը հողին մէջ պիտի մտնէ,

բայց երկնաւոր վիճակին պիտի փոխակերպուի, որուն մէջ պիտի ապրինք յաւիտեանս:

Ամենէն զօրաւոր մարդը որ կ'ապրի, որչափ որ բարձրը ցատքէ, նորէն վարը կ'իյնայ, որովհետեւ այս երկրին կը պատկանի բնական օրէնքով, քաշողական զօրութիւնը իր տեսակը իրեն կը քաշէ: Բայց այս հոգէ մարմինը հողին մէջ փտտի, այրի կամ ծովու մէջ ընկղմած ըլլայ, երկնային սերմը իր մէջն է. հետեւաբար իր ժամանակին երկնաւորը գայն պիտի ծագկեցնէ: Հողը իրենը թող չիտար որ երթայ, ձգողութեան օրէնքով երկրէն բան մը չպակսիր: Մագնիսը զօրութիւն մըն է որ այլազան նիւթերուն մէջէն միայն իր տեսակէն եղած նիւթերը կամ մետաղները իրեն կը քաշէ և ոչ ուրիշ բան:

Այսպէս մենք ալ պէտք է որ երկնային մագնիսին տեսակէն կամ բնութենէն ունենանք որպէսզի անկէ վեր քաշուինք: Կան ոմանք որ ոսկիի կամ արծաթի բնութիւն ունին. շատ աղէկ բան, բայց շատ ալ ցաւալի, վասնզի անոնց մէջ հոգեւոր մագնիսի բնութենէն բնութիւն չըլլալուն համար, երբ որ մեծ Մագնիսը, Տէրը գայ, գաւոնք իրեն չպիտի քաշէ: Շատ մը, լաւ բարոյականի և անուշ բնաւորութեան տէր մարդիկ կան որ ոսկիի և արծաթի պէս աղէկ են, բայց քանի որ վերստին ծնունդով Աստուածային բնութեան հաղորդ եղած չեն, չեն կրնար մագնիսէն քաշուիլ:

Օր մը, Տօքթ. Փէթինկըլը երբ իր մէկ բարեկամին երկաթի մեծ զործարանը կը պտտէր, զինք բերին վայր մը, ուր ամէն տեսակ մետաղներու հին կտորներով լեցուն կառքեր կային, որոնցմէ մէկուն վրայ խոշոր մագնիս մը իջեցուցին. այդ այլազան մետաղներու մէջէն միայն Բրկաթը կը քաշէր վեր կը հանէր: Այս տեսակով, Տօքթ. Փէթինկըլը յիշեց Յիսուս Մագնիսը, որ իրենմըրը միայն իրեն պիտի քաշէ երբ յայտնուի: Նա դարձեալ պիտի գայ այս երկաթներուն համար «ամէն բանի մէջ ամէն բան» ըլլալու, Ա. Կոր. ԺԵ 28: Կարելի է որ այս բաները մարդկային միտքը չհասկնայ, բայց ի՞նչ փոյթ, բաւական է որ մեքենան կը գործէ: Մարդկային միտքը շատ ուրիշ բաներ ալ չհասկնար կատարելապէս, օրինակ ելեկտրականութիւն, բայց հակառակ չմտնած ըլլալու անոր էութիւնը, կը հաւատայ և կ'օգտուի անկէ: Մագնիսը որ պարզ մետաղի կտոր մըն է, մէջը թաղնուած զօրութիւնով երկաթները իրեն կը քաշէ, այդպէս ալ երբ ինք յայտնուի, մենք ալ փառքով

պիտի յայտնուինք և իրմով պիտի յափշտակուինք:

«Բայց զայս կ'ըսեմ, եղբայրներ, որ մարմին ու արին Աստուծոյ թագաւորութիւնը չեն կրնար ժառանգել, ոչ ալ ապականութիւնը կը ժառանգէ անապականութիւն»։ Ա. Կորն. ԺԵ 50:

Քաղեց՝ ՅԱՐՈՒԹԻՒՆ ԽԱՐԲՈՒԹԵԱՆ

Բէսէտինա

ՊԱՏՄԱԿԱՆ

ՄԵԾ ԴԵՄՔԵՐ ՈՒ ԴԵՊՔԵՐ
ՀԱՅՈՑ ՀԱՒԱՏՈՑ ԸՆՏԱՆԻՔԷՆ

ՄԵԾՆ ՏՐԴԱՏ(*) ԵՒ ՔՐԻՍՏՈՆԷՈՒԹԻՒՆ

Տրդատի դարձէն մօտաւորաբար 12 տարի ետք՝ հոգովէական կայսրը, Մեծն Կոստանդիանոս, ունեցաւ տեսիլք մը, տեսաւ մարը մտնող արեւին վրայ լուսեղէն խաչ մը և անոր քով լուսեղէն տառերով գրուած «ասով յաղթէ» խօսքը։ Եւ նա խաչին նշանը ընտրելով իբր պատերազմական դրօշ՝ կոռուեցաւ իրենին եռապատիկը զինուորական ուժ ունեցող մրցակից կայսեր, Մաքսինսիոսի դէմ և յաղթեց անոր։ Ատկէ ետք Կոստանդիանոս դարձաւ բարեկամ քրիստոնէութեան և անոր հետեւողներուն, — ինչպէս նաեւ հեթանոսներուն — խղճի ազատութիւն շնորհեց՝ Միլանի հռչակաւոր հրովարտակով (313)։ Ասով զազրեցան կրօնական հալածանքները, քրիստոնէութիւնը հետզհետէ աւելի նպաստաւոր դիրքի տիրացաւ, զէթ արտաքնապէս յաղթեց հեթանոսութեան և վերջապէս դարձաւ հոգովէական կայսրութեան պետական կրօնքը։

Սակայն Մեծն Կոստանդիանոս հակառակ քրիստոնէաները քաջալերելուն՝ ինքը անձամբ կիսաճամբան մնաց, ճշմարիտ դարձ մը չունեցաւ. մէկ կողմէն քրիստոնէութիւնը կը պաշտպանէր և Արիոսի մոլար վարդապետութենէն յառաջ եկած կրօնական վէճերը զազրեցնելու համար նիկիոյ տիեզերական ժողովը կը գումարէր (325), իսկ միւս կողմէն հեթանոսներու կը ներկայանար իբր անոնց քահանայապետը ու սրտով կը մնար կատարեալ հեթանոս մը և

անգլթօրէն կը սպաննէր իր կինը, որդին և ուրիշ ազգականներ և բարեկամներ։ Արտաքնապէս ալ զուրս մնաց եկեղեցիէն, մկրտուեցաւ, երբ արդէն մահուան անկողինն մէջ կը գտնուէր։ Գէթ այդ ատեն ճանչցաւ իր յանձանքը և կարծես իբր խոստովանանք ըսաւ. «Հիմա թող չքանայ ամեն երկդիմութիւն»։

Այդպէս չէ մեր առաջին քրիստոնէայ թագաւորը Տրդատ։ Ո՛րքան նախանձախնդիր էր ան երբեմն հայրենի հեթանոս կրօնին և ոխերիմ թշնամի քրիստոնէութեան, այնքան աւելի խոր, հիմնական ու անկեղծ եղաւ իր դարձը։ Ան ոչ թէ միայն մտքով համոզուեցաւ, — ինչպէս Կոստանդիանոս — հապա նաեւ սիրտով հաւատաց թէ քրիստոնէութիւնն է միակ ճշմարիտ, փրկարար ու աստուածային կրօնը։ Ուստի բոլորանուէր անձնատուր եղաւ անոր դատին։ Թթու հալածիչ Սօդոսը դարձաւ Քրիստոսի սիրովը բոցավառ Պօղոս մը։ Քան զի ասոր նման ճանչցաւ իր մեղքերը, — մանաւանդ հաւատացեալներու դէմ յարուցած խռովութեմ հալածանքներն ու սուրբ Հովփսիմեանց վրայ ի գործ դրած անգլթութիւնները, — և տեսաւ թէ մեծ մեղաւոր մը ու կորսուած մըն է։ Սակայն միեւնոյն ատեն տեսաւ նաեւ Քրիստոսի փրկարար շնորհքն ու անհուն սէրը։ Այս երկու տեսութիւնը մղեց զինք՝ խորին զղջումով ու հաւատքով ապաւինելու Ասոր իբր Փրկչին ու Տէրօջը և հրաժարելով իր «հայրերէն աւանդուած ունայն ճամբաներէն» (Ա. Պետ. Ա. 18) ապրելու ճշմարիտ քրիստոնէի, անկեղծ ապաշխարողի ու գրեթէ ճգնաւորի կեանքը (Օրմանեան)։

Բայց Տրդատ ոչ թէ միայն ինք անձամբ կ'ապրէր քրիստոնէական կեանքը, հապա նաեւ մեծ նուիրումով ու նախանձախնդրութեամբ կը ջանար որ իր հայ ժողովուրդն ալ, — «թէ՛ մեծամեծ նախարարները և թէ՛ ռամիկ բազմութիւնը, — ճշմարտապէս Քրիստոսին ըլլան, որպէս զի իրենց հաւատքին վկային նաեւ իրենց գործերը» (Խորենացի)։ Ուստի ստէպ կը ճամբորդէր և իր կեանքովն ու խօսքովը կը յորդորէր ու կը խրախուսէր ամենն ալ՝ հրաժարելու հեթանոսական կենցաղավարութենէ և քալելու նոր հաւատքի պահանջած սիրոյ ու սրբութեան կանոններուն համաձայն եւ այսպէս գործեց գրեթէ 30 տարիներ, դարձի օրէն մինչեւ մահը (330)։

Ահա՛ անոր նկարագրի այս բարեմասնութեանց և այս եռանդուն գործունէութեան համար է որ Խորենացին Տրդատը կը կոչէ, «սուրբ, մեծ և

(*) Հռուսուրջի մօտին խաւելու ատեն՝ գրած ենք նաեւ Տրդատին վրայով։ Ուստի հոս պիտի գրենք միայն ինչ որ կարելի չէր մտցնել նախորդ յօդուածներուն մէջ։

մեր լուսաւորութեանց լուսաւոր վերակացու» և կը նկատէ զայն Գրիգոր Լուսաւորիչի «գուգաբան ու հաւասարագործ»։ Արդարեւ Տրդատ, եթէ ոչ Լուսաւորիչէն աւելի, գէթ անոր հաւասար դեր ունեցած է քրիստոնէութեան տարածման գործին մէջ։ Անոր քաղաքական ու բարոյական պատկառազօր հեղինակութիւնը, անկեղծ հաւատքէն բղխած նախանձախնդրութիւնը և համոզելու կարողութիւնը կարեւոր ազդակներէն մին եղաւ՝ գէթ արտաքինապէս ընկճելու հեթանոսութիւնը և անոր աւերակներուն վրայ կանգնելու քրիստոնէութիւնը։

Ասով չենք ուզեր մարդը փառաւորել. քանզի գործը Աստուծոյն էր և Ան մեծ Հափով զայն կատարած էր արդէն Լուսաւորիչէն և Տրդատէն առաջ։ Ինչպէս յաճախ յիշած ենք, մինչեւ 301, երկուքուկէս դարերու ընթացքին, թաղէտէն մինչեւ Սուրբ Հռիփսիմեանց, մեզի ծանօթ ու անծանօթ մարտիրոսներու աղօթքով և աշխատանքով, արցունքով ու արիւնով Հայաստանի հողը պատրաստուած էր։ Ինքն էր, որ այդ առաջին սուրբերը ծառայեցուցած էր Իր նախապատրաստական գործին համար։ Հիմա ալ դարձեալ նոյն Տէրն էր, որ Տրդատն ու Լուսաւորիչը մտաւոր ու հոգեւոր մասնաւոր պարգեւներով օժտեց ու զանոնք կանչեց արդէն սկսուած գործը ի կատար հանելու։ Անոնք ալ իրենց վստահուած պարտականութիւնը կատարեցին հաւատարմութեամբ ու մեծ եռանդով։

Ամբողջ հայ ազգը շուտով Քրիստոսի ոտքը խոնարհեցնելու նախանձախնդրութենէն մղուած՝ թէեւ անոնք երբեմն Հին Տնտեսութեան հոգիովը շարժեցան և առին կարգ մը փութկոտ, սխալ ու փնասակար քայլեր^(*)։ այսու հանդերձ անոնք ընդհանուր առմամբ սքանչելի գործ կատարեցին՝ Տէրով զօրութիւնովն ու շնորհքովը. — քամահարուած՝ քրիստոնէութիւնը կազմակերպուած ու պատկառելի ուժ մը դարձուցին, ճրագը գրուանի տակէն հանեցին ու աշտանակի վրայ բարձրացուցին, որպէս զի լոյս տար մեր բոլոր ժողովուրդին։ Կարելիք ճամբան թէեւ դեռ շատ երկար էր, մանաւանդ որ դեռ զիւր ու մեր լեզուովը Սուրբ Դիրք չունէինք, բայց վճռական քայլը առնուած էր, — հայը իր մեծամասնութեամբ ինկած էր քրիստոնէութեան ազդեցութեան տակ։ Այլեւս ո՛չ Շապուհներ ու Յազկերտներ և ո՛չ ալ կարգ մը հեթանոսամիտ հայ նախարարներ

չպիտի կարենային վերանորոգել հեթանոսութիւնը։ Եւ այս մեծ գործը կատարած էր Աստուած մասնաւորաբար Գրիգորի ու Տրդատի միջոցաւ։ Փառք ու երկրպագութիւն գործի ամենակարող Հեղինակին և յարգանք Անոր ձեռքին մէջ իբր գործիք ծառայող զոյգ լուսաւորիչներուն, նաեւ այն բոլոր ծանօթ ու անծանօթ մարտիրոսներուն ու սուրբերուն, որոնք սերմը արցունքով ցանեցին ու զայն իրենց արիւնով ոռոգեցին՝ առանց սակայն հնձելու ցնծութիւնն ալ վայելելու (Սաղմ. ՃԻԶ)։ Բայց անոնք իրենց պարտականութիւնը այդ խաւար օրերուն կատարեցին հաւատքով, յոյսով ու սիրով։ Ուստի անոնց ցանած սերմը վերջապէս իր պտուղը տուաւ. թէեւ ուշ, բայց սքանչելի։

ՀԱՅ ԱԶԳԸ ՇԱՀԵՑԱՒ ԹԷ ԿՈՐՄՆՈՒՅՔ ԳՐԻՍՏՈՆԷՈՒԹԻՒՆՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՎ ԻՐ ԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԿՐԾՆԸ. — Հոս տեղն է այս հալցին ալ պատասխանել համոռօտաբար։

Շատեր, մանաւանդ նոր սերունդէն, բացասական պատասխան մը կուտան։ Անոնք կ'ըսեն. «Քրիստոնէութեան երեսէն հայը կորսնցուց իր մարտական կորովն ու քաղաքական զիրքը և հետզհետէ ստրկացաւ»։ Սակայն պատմութիւնը չհաստատեր այս մեղադրանքը։ Հոս տեղը չէ բացատրելու թէ Աւետարանը պատերազմը կ'արգիլէ կամ ոչ։ Միայն բաւական է ցուցնել թէ հայը իբր ժողովուրդ անոր հնազանդելու դժուր մտով երբեք ալ իր սուրբ պատեանը դրած չէ։ Ատոր ապացոյց են, նախ մեր ժողովուրդին «քրիստոնէացումէն» ետքը հայ նախարարներու մէկ մէկու և իրենց թագաւորին դէմ մղած յաճախադէպ պատերազմները։ Եթէ հայերը Աւետարանին հնազանդելով՝ պատերազմիլը մեղք նկատած են, ամենէն առաջ եղբայրսպան ներքին կոիւնքը զազրեցնելու չէ՞ին։

Երկրորդ՝ «քրիստոնէացումէ» ետքը մեր ազգը արաքիւն թշնամիներու դէմ ալ առանց խղճահարութեան պատերազմած է։ Ատոր ապացոյց են հայոց առաջին քրիստոնեայ թագաւորին մղած երկու պատերազմները. առաջինը հռովմէական կայսեր, Մաքսիմիոսի դէմ, որ հայոց վրայ յարձակելով՝ «կը նեղէր զանոնք, որպէս զի կռոց ու զիւաց զոհին»։ Տրդատ, — թէեւ անկեղծ ապաշխարութեամբ դարձի եկած, — առանց խղճահարութեան դէմն ելաւ թշնամույն և պարտութեան ու փախուստի մատնեց զայն (311)։ Եւ Տրդատ իր այդ յաջողութիւնը կը պարտէր իր հայ բանակին, որ իր ծանօթ քաջութեանը կը միացնէր քրիստոնէական եռանդը»։ Տրդատ իր

(*) Ասոնց մասին մեր գիտողութիւնները կտրուա՛նք 1937։


դարձէն յետոյ երկրորդ յաղթական պատերազմ մըն ալ մղեց, — այն ալ իր խոր ծերութեան օրերուն, — հիւսիսային հրոսակներու դէմ, որոնք Հայաստանի վրայ յարձակած էին:

Տրդատէն ետքն ալ պատմութեան մէջ, գէթ ես չեմ հանդիպած ո եւ է հայ թագաւորի կամ իշխանի, որ Քրիստոսի հնազանդելու համար իր սուրը պատեանը դրած ըլլայ: Ընդհակառակն թէ՛ Արշակունեաց ու Բագրատունեաց և թէ՛ Ռուբէնեանց հարստութեանց օրերուն հայերը բազմաթիւ պատերազմներ մղած են: Այո՛, անոնք իրենց անկախութիւնը կորսնցնելէ՝ ետքն իսկ յաճախ ապստամբած են իրենց բռնապետ տէրերուն դէմ: Վկայ՝ Վարդանն ու Վահանը, Սասունցի Դաւիթը, Ղարաբաղի Մելիքները և Զէյթունը:

Ո՛չ թէ քրիստոնէութիւնը, հապա արտաքին բազմաթիւ թշնամիներու կարճ ընդմիջումներով յաճախակի յարձակումները և մեր ներքին երկպառակութիւնները եղած են պատճառ մեր քաղաքական անկումին:

Քրիստոնէութիւնը ընդունելով իբր պաշտօնական կրօն՝ հայ ազգը անկէ միայն օգուտ քաղած է: Անոր ներշնչումներուն կը պարտին իրենց գոյութիւնը, հայ գիրն ու գրականութիւնը և հայ գմայլելի մանրանկարչութիւնն ու ճարտարապետութիւնը: Այո՛, հայ ազգը իր գոյութիւնն իսկ անոր կը պարտի: Առանց անոր ներշնչած խրախույսին, կորովին, իտէյաներուն ու յոյսին՝ իր կրած աներեւակայելի տառապանքներուն չպիտի կրնար տոկալ: Յուսահատած պիտի իսլամանար ու ձուլուէր:

ԲՐՈՔԻ. Գ. Գ. ԽԱՅԻԿԵԱՆ



Ա.

Ահա հեթանոսները կը խոռովին, թագաւորութիւնները կը շարժին, բարձեալն իր ձայնը կուտայ և երկիրը կը հալի (Սաղմ. 46): Ահա Տէրոջ օրը կուգայ, անգթութեամբ, սրտատուրեամբ և սաստիկ բարկութեամբ, որպէսզի երկիրը աւերակ դարձնէ ու անոր մեղաւորները անկէ բնաջինջ ընէ: (Ես. 13): Տէրոջ մեծ օրը մօտ է: Այդ օրը

բարկութեան օր է, նեղութեան ու տառապանքի օր է, կործանումի ու աւերումի օր է, խաւարի ու մէզի օր է, ամպի և մառախուղի օր է: Այն օրը մարդիկ նեղութեան մէջ պիտի ձգեմ, որովհետեւ ինծի դէմ մեղք գործեցին. Սոփ. 1: Քանզի իմ վճիռս ազգերը ժողովել է կ'ըսէ Տէրը, ու թագաւորութիւններ գումարել է, որպէսզի անոնց վրայ իմ սրտատուրիւնս և սաստիկ բարկութիւնս թափեմ, քանզի բոլոր երկիր իմ նախանձիս կրակովը պիտի սպառի: Ուստի վա՛յ քեզի երկիր բանսարկուն քեզի իջաւ՝ քիչ ժամանակ ունի, բայց շատ բարկութիւն:

Արեգակին, լուսինին և աստղերուն վրայ նշաններ պիտի ըլլան ու երկրի վրայ ազգերը ապշութեամբ պիտի տազնապին: Ծովը ու ալիքները պիտի գոռան, մարդոց սիրտերը պիտի նուաղին իրենց վախէն և աշխարհի վրայ զալու բաներուն սպասելէն, վասնզի երկինքի գօրութիւնները պիտի շարժին, որովհետեւ փառաց անմահ թագաւորը պիտի գայ: Ղուկ. 21:

Չար ժամանակներ պիտի գան, մարդիկ հաւատքէն պիտի ապստամբին ու ճշմարտութեան ճամբան պիտի հայհոյուի, եկեղեցիները պիտի քանդուին, Սուրբ Գրքերը պիտի այրուին և հաւատացեալներ պիտի սպանուին, սատանան և մարդը միացած քրիստոնէութիւնը պիտի հալածեն:

Չար ժամանակներ պիտի գան: Ուշի ուշով մտիկ ըրէ ու տես թէ Պօղոս ի՞նչ կը զրէ Տիմոթէոսին: «Եւ զայս գիտցիր որ վերջին օրերը, չար ժամանակներ պիտի գան, վասնզի մարդիկ պիտի ըլլան, անձնասէր, արծաթասէր, ամբարտաւան, հպարտ, հայհոյիչ, ծնողաց անհնազանդ, ապերախտ, անսուրբ, անգութ, անհաշտ, բանսարկու, անժուժկալ, դաժանաբարոյ, բարին չի սիրող, մատնիչ, յանդուգն, գոռոզ, աւելի հեշտասէր քան աստուածասէր, որոնք աստուածապաշտութեան կերպարանքը ունին, բայց անոր գօրութիւնը ուրացած են, և դուն ասոնցմէ մէկդի կեցիր Բ. Տիմ. Գ:

Քար զայթակղութիւն է եղած այս «վերջին օրերը» բառը ամէն անոնց համար որ խաղաղութիւն չունին Տէր Յիսուս Քրիստոսին հետ, և Անոր սուրը և պատուական արիւնով փրկուած չեն: Այսպիսիներ Քրիստոս փեսային վաղաժամ գալը չեն սիրեր, մինչդեռ պիտի յայտնուի անոնց միայն, որոնք Անոր կը սպասեն (Եբր. 9) և իմաստուն կոյսերուն պէս փեսային սպասողներուն, և ոչ թէ այն ծառային պէս որ ըսաւ, իմ Տէրս իր գալը կ'ուշացնէ. և թէ ուշանայ ալ, բարիք

մ'է մեզի, կ'ուզէ որ բոլորս՝ փրկուինք և ճշմարտութիւնը ճանչնալու գանք, զի մարգարէին միջոցաւ ըսած է՝ ես մեղաւորին մեռնիլը չեմ ուզեր, դարձիր ու ապրէ:

Եթէ Սուրբ Գիրքը քննենք, պիտի տեսնանք որ մենք կ'ապրինք շնորհաց տնտեսութեան վերջալոյսին մէջ, այս շնորհաց տնտեսութիւնն ալ պիտի վերջանայ Աստուծոյ բարկութեամբ, ինչպէս եղաւ Նոյին ջրհեղեղով և Ղովտին ատեն Սողոմոն կրակով: Զարմանալի չէ՞. ինչպէս Նոյին և Ղովտին օրերը չի գիացան, նոյն և հիմա պիտի չի գիտնան կ'ըսէ Տէր Յիսուս: Ի՞նչ է պատճառը որ Նոյին տապան շինող հիւսնները անգամ իրենց շինած տապանը չի կրցան մտնել: Պատճառը անհաւատութիւնն է. ինչո՞ւ Ղովտին կինը աղի արծան դարձաւ, պատճառը նորէն անհաւատութիւնն է...

Իմ բարեկամս, կշիռդ, չափդ, կարծիքդ, տրամաբանութիւնդ և գիտութիւնդ բոլորը ծալլէ ու մէկ կողմ նետէ: Աստուծոյ խօսքին միայն վստահէ, որ հաստատ է երկնից մէջ, ու այդ ու ամէն է ամենուրեք, զի ինք ըսաւ. «Երկինք երկիր պիտի անցնի բայց իմ խօսքերս ոչ, բնաւ պիտի չանցնի»:

1917 էն ի վեր թղենին սկսած է բողբոջիլ, եղեկիէլի 2500 տարուան չորցած Իսրայէլի ոսկորները սկսած են վերակենդանանալ, և հրեան սկսած է ազգային յարութիւն առնել և վերադառնալ իր հայրենիքը: Հեթանոսաց ժամանակը պիտի գոցուի, Նաբուզոդոնոսորին տեսած և Դանիէլին մեկնած արձանին վերջին արարողութիւնը պիտի կատարուի անյապաղ: Ոտքերու մատներուն կէսը կաւէ ու կէսը երկաթէ պիտի փշրուի առանց ձեռքի կտրուած՝ քարին հարուածով, և այսպէսով 25 դարերու հեթանոսաց տիրապետութիւնը պիտի լրանայ, ու պիտի սկսի թագաւորաց թագաւորին հազարամեայ իշխանութիւնը:

Իմ բարեկամս, ինչո՞ւ անհաւատութեան և թմրութեան հոգիով լեցուած ես: Գիտցիր, երբ արթննաս բոլոր զօրութիւնդ գացեր է, ինչո՞ւ Յովնանին պէս Տէրոյմէն կը փախչիս և փոթորկոտ նաւին մէջ քնանալ կուզես: Ել խոր քունէդ դու ալ քու Աստուծոյդ կանչէ, գուցէ փոթորկուած այս աշխարհը խաղաղի, եթէ ոչ փրկութիւն չկայ. քառս կ'երթանք և քաղաքակրթութիւնն ու գիտութիւնը պիտի ընկղմին առանց վեր ելլելու պայմանաւ: Մի յուսար Բոզվէլթին և Լէնինին, Ֆաշիստ կամ սօցիալիստ անունը չէ որ պիտի փրկէ մեզ: Մէկը կայ որմէ ազգեր ու

անհատներ հեռացեր են և որն ըսաւ զթոտ նայուածքով. «Եկէք ինծի բոլոր յոգնած և բեռնաւորուած գործաւորներ և գործատէրեր՝ ես ձեզ պիտի հանգչեցնեմ, իմ լուծս քաղցր է և իմ բեռս թեթեւ»: Ընկերվարական և կամ ազգայնական, երկուքն ալ ծանր բեռներ ունին, զի երկուքն ալ Քրիստոսը իրենց անձնական Տէր ու Փրկիչ չունին, և առանց Անոր բան մըն ալ չեն կրնար ընել: Ուստի գնա Անոր քով որ ըսաւ «Իմ խաղաղութիւնս կուտամ ձեզի որ աշխարհը չկրնար տալ»:

Դիւանագիտութեան և մարգարէութեան պէտք չկայ, առ օրաթերթը և կարդայ պիտի տեսնես թէ ազգերը ի՞նչ արտակարգ դիւային պատրաստութիւններ կը տեսնեն վաղուան համար: Գիշեր ու ցորեկ թնթանօթ, զրահանաւ, օդանաւ և հեղձուցիչներ կը պատրաստեն:

Խաղաղութիւն կը փնտռե՞ս, մի՛ փնտռեր, չկայ: Խաղաղութիւն չկայ ոչ տուներու մէջ, ոչ եկեղեցիներու մէջ, և ոչ ալ ազգերու մէջ: Տէրը Զաքարիա մարգարէին միջոցաւ կ'ըսէ, «Բանգի ես ամէն մարդ իր ընկերին դէմ ոտքի պիտի հանեմ»: Միթէ քաղաքի մէջ չարիք մը կա՞յ որ Տէրը զանիկայ ըրած չէ (Ամով. Գ): Ո՞վ անհատներուն և կամ ազգերուն չարիք պիտի հասցնէ, եթէ անոնք բարիին հետեւող ըլլան: Գնա, ալ մեղք մի գործեր ըսաւ Տէրը, որ ալ չար բան չի պատահի քեզի: Պատճառը մեղք և անհաւատութիւն է: Դուք ինծի չէք գար որ կեանք ունենաք, ըսաւ Տէր Յիսուսը: Ցաւալին այն է որ կան շատ մը աղանդի պէս միամիտներ, որոնք Սուրբ Գրքէն լուր չունին և կը պնդեն թէ լաւ օրեր է, և լաւ օրեր կ'ունենանք և այսպիսի նեղութիւններ միշտ եղեր է, նորութիւններ չեն ասոնք: Երանի թէ իրենց ըսածը շիտակ ըլլար, բայց մի խաբուիր, Աստուած ծաղր չըլլար, ինչ որ ցանենք նոյնը պիտի հնձենք»: Կարծեմ նոյնպէս լաւատես էին Նոյին տապանը ու Բաբելոնի աշտարակը շինողները: Բայց Սուրբ Գիրքը կարդանք: «Ով Երեմիա, առ այս բարկութեան գիւնիին գաւաթը և խմցուր բոլոր ազգերուն և ըսէ, խմեցէք, գինովցէք և ձեր մէջ զրկածս սուրին երեսէն ինկէք ու ալ մի ելլէք, վասնզի երկրի բոլոր ազգերուն վրայ սուր պիտի կանչեմ և ազգերուն հետ դատաստան ունիմ, ու ամէն մարմինը պիտի դատեմ ու ամբարիշտները սուրի պիտի տամ. ահա չարիքը մէկ ազգէն պիտի ելլէ ու անցնի միւս ազգերին»: Սոսկումով կը կարդամ Աստուծոյ այս անեղ բարկութիւնը, որ շուտով պիտի գայ բոլոր ազգերուն վրայ: Ես ալ

ջերմ փափաքող եմ խաղաղութեան, բայց երբ դառնամ Աստուծոյ խօսքին՝ կ'ըսէ, խաղաղութիւն չկայ, ամբարիշտները խաղաղութիւն պիտի չունենան, հապա սոփ, սուր, սոսկում, նեղութիւն, խռովութիւն, երկրաշարժ, փոթորիկ, ջրհեղեղ և ասոնք բոլորը տակաւին ցաւերուն սկիզբն են, և որուն պիտի յաջորդէ մեծ նեղութիւն մը, որուն նմանը ոչ եղած է և ոչ ալ պիտի ըլլայ: Մատթ. 24 և Դան. 12:

ԱՐՄԷՆ ՇԱՀՊԱՂԼԵԱՆ



ՊԱՏԱՆԵԱՅ

ԱՍՏՈՒԱԾ ՄԵԶԻ ՀԵՏ

Ասկէ երկու հազար տարի առաջ, Ադրիական ծովուն եզերքը, խրճիթներու մէջ կ'ապրէին խեղճ մակուկավարներ, որոնք իրենց չարքաշ կեանքով ամէն տեսակ վտանգներու ենթարկուած էին շարունակ և դժուարաւ կը քաշքշէին իրենց թշուառ գոյութիւնը,

Օրին մէկը մարդ մը եկաւ ասոնց մէջ և մակոյկ մը ուզելով հրամայեց որ ուտելիքներ պատրաստեն և զինքը ծովէն անցնեն: Մակուկավարները ի զուր հասկցնել ուզեցին անոր թէ ծովը ալեկոծ է. փոթորիկը կը սպառնայ շուտով պայթիլ: Անծանօթը մտիկ ընելու միտք չունէր, ան կ'ուզէր ճամբայ ելլել, և այն տեսակ հրամայելու ձեւով մը կը խօսէր որ չկրցան զայն մերժել վերջապէս, որովհետեւ անոր ձայնին և շարժումներուն մէջ հնազանդեցնելու և տիրապետելու տարօրինակ բան մը կար:

Մակոյկ նստան ու ճամբայ ելան: Գիշերը վրայ հասաւ, հովը սկսաւ սուլել և քիչ յետոյ փոխուեցաւ փոթորիկի. փոքրիկ մակոյկը սկսաւ տարուբերուիլ ընկոյզի կեղեւի մը նման: Ամէն վայրկեան ալիքները անոր վրայէն կ'անցնէին և կը սպառնային զայն ծովուն յատակը իջնելու:

Անծանօթը բառ չէր արտասաներ, և իր վերարկուն մէջ փաթթուած, դեկին մօտ կեցած էր անտարբեր, ու բնաւ չէր կասկածեր թէ վտանգը մօտալուտ է: Երկար ատեն նաւաստիները լիավարեցին և կոհակներուն ղէմ պայքարեցան, բայց վերջապէս վախը անոնց սիրտը լեցուց ու զանոնք անշարժացուց: Անոնք ազօթք մը

մըմնջեցին իրենց չափաւածներուն և պատրաստուեցան մեռնելու:

— Ի՞նչ կը վախնաս, ըսաւ խորհրդաւոր անծանօթը անոնցմէ մէկուն, դուն կեսարը և իր բախտը ունիս հետդ:

Արդարեւ այդ անձը Յուլիոս Կեսարն էր. ձեզի ծանօթ Հռովմայեցի զօրավարը, այն յաղթականը, որուն կը ժպտէր բաղդը միշտ և ամէն տեղ: Անոր էր որ կապած էին խեղճ նաւավարները իրենց ճակատագիրը այդ գիշեր, առանց գիտնալու:

Այդ վայրկեանէն սկսեալ անոնց վախը դադրեցաւ, յոյսը վերադարձաւ: Անոնք (աւելորդապաշտ ըլլալով) այս մարդուն և անոր բախտին վրայ հաւատք ունէին: Անոնք գիտէին որ բազմաթիւ անպաւններ, անոր ներկայութիւնը ազատած է զինուորները ամենէն սարսափելի կացութենէն և ուստի հաւատացին որ անոր հետ չպիտի կորսուէին:

Անոնք նոր ուժ ստացած՝ ծռեցան իրենց թիակներուն վրայ: Բիչ յետոյ հովը դադրեցաւ, ծովը խաղաղեցաւ, գիշերը անցաւ և ցերեկը ծայր տուաւ և անոնք միւս կողմը անցան:

Այն պատանիները, որ կեանքի փոթորիկներէն ասդին անդին կը քշուին, ամէն անոնք որ իրենք զիրենք երեսէ ձգուած ու միւսակ կը զգան, բոլոր անոնք որ իրենք զիրենք անզօր կը կարծեն պայքարելու, զիմադրելու, ապրելու կամ մեռնելու, թող հաւատան թէ իրենց մօտ, իրենց հետ, խորհրդաւոր և ամենակարող օգնական մը կը կենայ շարունակ — Յիսուս Ինքը, Մեծ Յաղթականը:

Բաւական չէ գիտնալ թէ երկինքի մէջ Աստուած մը, Փրկիչ մը կայ: Երկար ատենէ ի վեր Ադրիականի հեթանոս նաւավարները Կեսարի գոյութիւնը լսած էին և անոր անունը գիտէին, բայց իրենց յուսահատութեան մէջ ատիկա բանի մը չէր ծառայեր: Սակայն այն վայրկեանէն որ անոնք գիտցան թէ Կեսար, մեծ յաղթականը, իրենց հետ նոյն նաւակին մէջն է, թէ իրենց խեղճ կեանքը անքակտելիօրէն կապուած է անորին հետ, յոյսը և փրկութեան վստահութիւնը անոնց ուժ ներշնչեցին:

Սիրելի բարեկամներս, կը տեսնէք որ դուրսը ոչինչ փոխուեցաւ, հովը առաջուան պէս կը սուլէր, ծովը միշտ կատղած էր և ալիքները շարունակ կը բարձրանային և կը սպառնային փոքրիկ նաւը ջարդ ու փշուր ընել և մարդիկը ծովուն անդունդը զրկել: Ուրեմն նաւավարները ի՞նչպէս հանդարտեցան, որովհետեւ փոփոխու-

Թիւնը անոնց ներսիդին էր որ տեղի ունեցաւ, անոնց զգացումները փոխուեցան, վախին ու սարսափին տեղ, սոսկումին և յուսահատութեան փոխան, յոյսն ու վստահութիւնը զբաւեցին անոնց սրտերը: Իսկ ի՞նչ էր այս յանկարծական ներքին փոփոխութեան պատճառը, այն՝ որ անոնք զիտցան թէ ո՞վ էր իրենց քով ներկայ եղողը: Այդ անձանքը առաջ ալ հոգ էր, բայց անոնք շուարած ու մեծ խռովութեան մէջ ինկած էին, որովհետեւ չէին գիտեր թէ այդ անձը Յուլիոս Կեսարն է. ուրիշ խօսքով՝ Կեսար իր բարի բախտով միշտ ներկայ էր, բայց իրենք այնպէս կը զգային որպէս թէ ներկայ չըլլար բնաւ:

Իսկ մենք, պէ՞տք է որ վախնանք ու զարհուրինք, կը վայելէ՞ մեզի՞ Աստուծոյ զաւակներուս շփոթիլ և յուսահատիլ: Եթէ կը յուսահատինք, կը նշանակէ որ չենք գիտեր թէ Տէրը մեզի հետ է ամէն օր, ըստ իր բազմաթիւ խոստումներուն, կը մոռնանք Աստուծոյ սփոփարար և փրկարար ներկայութիւնը և կ'ապրինք այնպէս՝ իբր թէ Ան բնաւ ներկայ եղած չըլլար:

Քայլ մըն ալ առաջ երթալով, կրնանք ըսել թէ մեզմէ շատերս Աստուծոյ ներկայութեանը զիտակցութիւնն ունինք յաճախ: Այո՛, կ'ըսենք, Քրիստոս անշուշտ ներկայ է միշտ. բայց և այնպէս դարձեալ չենք դադարիր մտահոգուելէ եւ տաքնապելէ: Ասոր պատճառն ալ մեր հաւատքին պակասն է:

Սակայն քաջաւերուինք: Ի՞նչ փոյթ եթէ աշխարհ ու իր բոլոր տարրերը մեզի հակառակ են, քանի որ Յիսուս մեր մէջ է:

«Մի վախնար, միայն հաւատա՛, Ես քեզի հետ եմ: — Մի զարհուրիր, քանզի Ես քեզի հետ եմ քեզ ազատելու համար: — Ահա ես ձեզի հետ եմ մինչեւ աշխարհի վերջը»: Յ. Ք.

Ս Ի Ր Է՝

ԶԱՍՏՈՒԱԾ

Աստուծոյ տունը:

» զաւակները:

» Խօսքերը:

» ձեռագործները:

Սիրէ՛ թշուառները:

» բարեկամները:

» թշնամիները:

» անտեսանելի ընդհանրապէս:

» քու իսկ անմահ ՀՈԳԻԴ:

ԽՆԱՅԷ՝

Աչքի գէշ տեսարաններէ:

Ականջի դատարկ ձայներ լսելէ:

Լեզուի կիզիչ ու չար խօսքեր խօսելէ:

Ձեռքերի ալոց փնասելէ:

Ոտքերի ո՛չ շինիչ զբոսավայրեր երթալէ:

Միտքի ունայն, մեղսալից խորհուրդներէ:

Սիրտի աշխարհասիրութենէ, ազահուլթենէ:

Զօրութիւնի սպառելէ վաղանցիկ բաներու:

Մարմինի ընկճելու հոգերու ներքեւ:

Ժամանակի պարապի վատնելէ:

Ձեռքերի չարութեան գործածելէ:

Անձի շոյելէ, նաեւ սպաննելէ:

Քսակի շոյելելէ:

Հոգիի կորստեան մատնելէ:

Բ. Գ. ԵԱՐՏԸՄԵԱՆ

Երուսաղէմ, 20 Յուն. 1938



Մ Ա Ն Կ Ա Ն Ց

Մ Ա Ն Կ Ա Ն Կ Ա Ն Ի Ղ Զ Ս

Եկուր Յիսուս, սրբաբա մէջ

Բընակէ սիրովդ անշէջ

Հոն միշտ տեղ կայ քեզ համար

Լայն, լայն, ե՛կ, մի ուշանար:

Յիսուս, տուր որ ես ըլլամ,

Բարի տղայ մ'անըման

Ինչպէս վայել է Քեզի

Յարող, ամեն պատիկի:

Սիրոյ Յիսուս, դիս պահէ

Անտեսանելի մեղքէ:

Օգնէ ինձ որ Սատանան

Զիս չը տանի փորձութեան:

Արեամբդ սրբէ սիրտս անարդ

Ըլլամ գերթ ձիւն ըսպիտակ

Եւ փայլուն քան աստղերէն

Այս է բաղձանքն իմ, ամեն:

Պ. Այրէս

ՍԻՍԱԿ ԳԱԼԱՅԵԱՆ



ՁԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ



ՔՈՐԻՍՏՈՅԻ մէջ Աւետարանական եկեղեցիին լաւ կը յառաջանայ: Հիմա 520,000 քրիստոնեաներ կան հոն, 15,000 կամաւոր Աւետարանիչներ ու 35,000 կիրականօրեայ դպրոցի աշակերտներ: Հոս եկեղեցիներուն համար կարեւոր գործ մը սա է, որ տարբեր ժամանակներու մէջ մէկ կամ մինչեւ իսկ վեց շաբաթ տեւող Ս. Գիրքի դասընթացքներ կ'ըլլան, որոնց մէջ Ս. Գիրքի սերտողութիւն, աղօթք և հոգեւոր գործի պատրաստութիւն կ'ըլլայ: Անցեալ տարուայ ընթացքին այսպիսի ժողովներու յաճախողներու թիւը 182,000 եղած է:

Արգիօք աշխարհի մէջ ո՞ր եկեղեցին իր անդամները Սուրբ Գիրքի այսքան հիմնական ազդեցութեան տակ կը բերէ:

Դիտ. Խմբ. — Պէյրութի մէջ միսիոնարական շարժում մը սկսած է, նպատակ ունի Քորիայի մէջ միսիոնար մը պահելու. գեղեցիկ ձեռնարկ մըն է այս: Յաջողութիւն կը մաղթենք:

ՄՈՒՍՈՂԻՆԻ ԵՒ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԸ. — Փասիսթ կառավարութեան կողմէ Մուսուլիների իշխանութեամբ շրջաբերական մը ղրկուած էր հետեւեալ բառերով Իտալիոյ բոլոր դպրոցի տնօրէններուն, յանձնարարելով նոր Կտակարանի գործածութիւնը:

«Բոլոր փրօֆէսորները և ուսուցիչները պիտի կարգան նոր Կտակարանը և բացատրեն այս աստուածային գիրքը մանուկներուն, հոգ տանելով որ ամենէն գեղեցիկ հատուածները զոց սորվին: Այս գիրքը պէտք է ամեն դպրոցական զրադարաններու մէջ գտնուի, վասն զի անիկա միշտ նոր է, ամեն դարու մէջ: Այս է բոլոր գիրքերուն ամենէն մեծը, բոլորէն՝ ամենէն կարեւորը վասն զի ան աստուածային է: Այս գրքին միջոցաւ ազգային կառավարութիւնը կը փափաքի մանուկները բերել (և մանուկներուն միջոցաւ իտալացի ժողովրդեան ոգին) գտնելու հաստատ ճամբան որ պիտի առաջնորդէ մեր հայրենիքը ամենափառաւոր և ամենաճշմարիտ մեծութեան»:

(Sunday School Times)էն

ՄԱՐԹԻՆ ԼՈՒՏԷՐԻ ՄԷԿ ՄԱՐԳԱՐԷՌԻՍԻԻՆԸ. — Լուտէրին վրայ յաճախ սա հոգը կը ծանրանար. Աստուած օր մը Գերմանիան ալ իր

լուիովը պիտի պատժէ: Շատ անգամ ասոր մասին կը խօսէր և անգամ մը ըսաւ, «Հրեաները մարգարէները սպաննեցին, Քրիստոսը խաչը հանեցին և առաքեալները հալածեցին, բայց քիչ յետոյ Նրուսաղէմ աւերակի վերածուեցաւ և այս աւերումը մինչեւ այս օր կը շարունակէ: Աստուծոյ խօսքը անարգող Գերմանիան ալ այսպէս պիտի ըլլայ: Ինծի անանկ կուգայ որ Աւետարանի այս լոյսէն յետոյ թանձր խաւար մը պիտի գայ, այնպէս որ ամպիոններէն Տէրոջը խօսքը հրապարակաւ լսուելէ պիտի դադրի և անկէ քիչ յետոյ դատաստանի օրը պիտի գայ»:

ԱՆԳԼԻՈՅ ՀԱՐԱԼԱՅԻՆ մասերուն մէջ, հազարէն աւելի տեղեր կան, որոնց մէջ սրճարաններ գոյութիւն չունին, 1935ի մէջ հրատարակուող թերթի մը տուած տեղեկութեան համաձայն: Սոյն թերթը նաև հետեւեալը կը գրէ. — Սալթէր քաղաքին մէջ, որ 4000 բնակչութիւն ունի, միայն երկու սրճարաններ կայ, սակայն տուներու ըմպելիք ծախելու արտօնութիւնը չունին: Ասոնց արդիւնքը հետաքրքրական է: Ժողովուրդը աշխատասէր է, տղաքը լաւ հագցուած եւ տունները բարեկեցիկ վիճակի մը մէջ են: Տարբեր ժամանակներու մէջ քանի մը անգամ քուէարկութիւն տեղի ունեցաւ ու ժողովուրդը այս օրէնքներուն շարունակուելուն կողմնակից եղաւ: Սկզբից մէջ նախապէս ձկնորսները առհասարակ խմելու հակամէտ էին, քանզի կը խորհէին թէ իրենց ծանր աշխատանքին մէջ առանց անոր չէին կրնար ապրիլ. բայց այսօր այդ մասերուն մէջ սրճարան մը չեա կրնար գտնել: Օրէնքին հակառակ գործողները հազուադիւրս են: Հարստութիւնը աւելցած և բարոյական կեանքը բարձրացած է:

ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ԶՕՐԱՎԱՐԸ. — Զօրավար Փանկ Եիւ Հիսեանկ, որ կը կոչուէր քրիստոնեայ զօրավարը ասկէ 15 տարիներ մը առաջ, շատ ժողովրդական դարձած էր բողոքական շրջանակներու մէջ: Շատեր ապագայի մեծ յոյսերով կը նայէին անոր վրայ: Յետոյ անոր մասին լուրեր տիրեց, այնպէս որ մտահոգուողներ կային թէ արդիօք քրիստոնեայ զօրավարը այնպատեցած է:

Ո՛չ, անիկա կ'ապրէր, սակայն իր զգացում-




(Շարունակութիւնը տե՛ս 4րդ էջ)

Le Gérant : H. N. GHAZAROSSIAN

Imp. Y. ARMEN & Cie 39 Rue St. Savournin Marseille

ՕՆ ՉԱՐԹԻՐ

(Գերմաներէնէ՝ Յ. Ն. Դ.)



1. Օ՛ն, զարթի՛ր, օ՛ն զարթի՛ր,
Սիրտ, քունէ՛ղ զարթի՛ր,
Ո՛հ, դարձուր աչքերդ դէպի վեր
Թէ ոչ կրես մնայուն աւեր,
Օ՛ն, փնտռէ Փրկիչդ շուտ զուն ալ
Երբ կ'ունգես ազատ ըլլալ,
Լքո՛ւ լուրն ճիշդ աշուր
Ո՛հ, սիրտ մեղաւոր:
Կրկ. Օ՛ն զարթի՛ր, օ՛ն զարթի՛ր
Սիրտ, քունէ՛ղ զարթի՛ր:

3. Միշտ հանգիստ քու հոգւոյն
Է՛ Տէրոջ խոստում:
Եւ, սիրով եղիր վըտահ դու,
Սուրբ Հովին իր՛կու առաւու
Քեզ հովուէ՛ երկնից ժարգին մէջ
Իր սէրն ու դու՛ծն են անշէշ:
«Հետեւէ հետքերուս»,
Կ'ըսէ քեզ Յիսուս:
Կրկ. Օ՛ն զարթի՛ր...

2. Օ՛ն յառաջ դուն փութա՛
Դէպ կենաց ճամբայ,
Զի չըկայ հոս մէկ ինչ անեղծ,
Որ մարէ անյագ քու իղձ:
Ի գուր դու Հանքեր թափես պիտ'
Եւ չգտնես քու հանգիստ:
Վեհ Փրկչին տուր արիւն
Քեզ կեանք փրկութիւն:
Կրկ. Օ՛ն զարթի՛ր...

4. Օ՛ն զարթի՛ր, օ՛ն զարթի՛ր
Սիրտ, քունէ՛ղ զարթի՛ր,
Միշտ քեզ հետ եմ մ'ըլլար տրտում
Է՛ Տէրոջ մնայուն խոստում.
Պիտք ըլլաւ հաստատ քայլերդ,
Տե՛ս օգնող Փրկչիդ գորով.
Վստահէ՛, ե՛ւ, կանգնէ՛
Ո՛ն դքերդ թօթափէ՛:
Կրկ. Օ՛ն զարթի՛ր...

ները փոխուած էին. երթալով աւելի պօլշեիկ ազդեցութեան ենթարկուելով, Ֆանկ քրիստոնէական հաւատքը կը թողուր և Մոսկուայի մէջ ժամանակ մը կենալէ ետք, բացէ ի բաց պօլշեիկ վարդապետութեան կապուած էր:

Տարիներ անցան, բայց իր հին բարեկամները չդադարեցան իր ապաշխարութեան՝ կամ աւելի ճիշդը իր կրկին քրիստոնէական հաւատքին դառնալուն համար աղօթելէ, վասնզի անոնք ընաւ տարակուսած չէին իր անկեղծութեան վրայ: Կը կարծուի թէ Ֆանկի կրած փոփոխութիւնը հայրենասիրութեան մէջ իր ունեցած ձախողանքի վշտին հետեւանքն է:

Անցեալ տարի շշնջիւններ տարածուեցան, թէ Ֆանկ քրիստոնէական հաւատքին վերադարձած է, այս անգամ առանց աղմուկի: Տեղեկութիւններ առնուեցան և Alliance Missionnaire Chrétienneի վեր. Պ. Պիւրէլը հետեւեալը կը գրէ ամերիկացի իր գործակիցներէն մէկին. —

«Հանրածանօթ չինացի աւետարանիչ Վեր. Մարք Շանկ մեզի բարի լուրեր հաղորդեց Ֆանկ եիւ Հիսեանկի վրայ, որոնք անձամբ ստացած է Վեր. Հիւէ, թէ Ֆանկ իր Ս. Գիրքը կը սերտէ և կ'աղօթէ: 1936 Յուլիսին Ֆանկ մարդ զրկած և կանչել տուած է Վեր. Հիւ, խնդրելով անկէ որ իր հետ Նանքէն երթայ: Վեր. Հիւ, առաջարկը ընդունելով զացած է և ամէն առտու կանուխ Ս. Գրային դաս մը կուտայ զօրավարին և անոր հետ միասին կ'աղօթէ: Ամբողջ տարի մը ամէն օր այսպէս եղած է և Վեր. Հիւ կը յայտարարէ որ Ֆանկ ուրիշ մարդ մըն է, նաև թէ չվախնար հրապարակաւ իր վկայութիւնը տալէ. Ֆանկ դարձեալ սկսած է Նոր Կտակարաններ տալ իր սպաներուն»:

Տէրը տայ որ Ֆանկի հաւատքի վերադառնալը վերջնական ըլլայ, քանզի անիկա աչքառու մէկն է և իր ազդեցութիւնը կրնար մեծ ըլլալ, եթէ ան գար երկրորդել ճշմարիտ քրիստոնեայ մը եղող մարաջախտ Շանկ Քայ Շէքի ազդեցութիւնը, որուն օրինակը ուղղակի կամ անուղղակի ազդած ըլլալու է զօրավար Ֆանկի վրայ:

Թարգ. «Christianisme au XX^e Siècle» էն

Ի. Յ. ԱՔՐԱՀԱՄԵԱՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

Մեզի հարցուած է զանազան կողմերէ թէ «Բանբեր»ի մէջ հրատարակուող երգերը, որոնք մեծ արժէք կը ներկայացնեն, արդեօք անպագային պիտի տպուին:

Մեր պատասխանը հետեւեալն է. —

Այս երրորդ տարին է որ «Բանբեր» ամէն ամիս նոր երգ մը կը բերէ ձեզի: Պիտի շարունակենք նոյն շաւիղով քալելու և այս կերպով ալ օգտակար ըլլալու եկեղեցւոյ առաջնորդներու, Կիրակնօրեայ դպրոցի ուսուցիչներու, Երիտասարդաց Միութեանց և ընտանեկան յարկերու:

Մեր նպատակն է, մօտաւոր ապագային եթէ Տէրը կամի, երկու հատոր երգարան շինել, մին պատանեկան շարժմանց համար (Կիրակնօրեայ դպրոց, Ջանասիրաց, Երիտասարդաց Միութիւններ կայն), իսկ միւսը Հափահասներու և հոգեւոր պաշտամունքներու առթիւ գործածելու:

Ինչպէս մինչեւ հիմա տեսնուած է, խղճամիտ և երաժշտական գիտակցութեամբ կ'ընտրենք մեր երգերը, զանոնք մեր եկեղեցիներու ապագայ սեփականութիւն ընելու: Թարգմանութեանց գալով՝ զանոնք երբեմն բառ առ բառ և երբեմն ալ բոլորովին ազատ կը թարգմանենք, մեր պարապանքներուն և ըմբռնումներուն համաձայնեցնելով, առանց սակայն անոնց հոգեւոր արժէքը պակսեցնելու. ընդհակառակն:

Ապագային պիտի ջանանք նաև հայկական հեղինակութիւններ ալ առնել. այդ պատճառաւ կը խնդրենք բոլոր ընթերցողներէն, զրկել մեզի ինչ որ ունին, որպէս զի անոնցմէ յարմարները դնենք երգարանին մէջ, իսկ մնացեալները իրենց փափաքին համաձայն նորէն իրենց կրնանք փառարձնել:

Թարգմանեալ երգերու մասին ունէ դիտողութիւն (բառի փոփոխութեան, յարմար բառի մը տեղաւորումի կամ տեղափոխութեան մասին) սիրով և շնորհակալութեամբ նկատի կ'առնուի: Մեր փափաքն է հրատարակել զեղեցիկ և արդիական երգարան մը, որուն մէջ գոհացում զանեն հոգեւոր բոլոր փափաքները:

Այս մասին կ'աղօթենք և ձեր ալ աղօթքները կը խնդրենք, ինչպէս նաև ձեր գործնական աջակցութիւնը:

Առ այժմ մեր քով ունինք մինչեւ հիմա տպուած և տարւոյս մինչեւ վախճանը տպուելիք երգերուն խօսքերը, պզտիկ տետրակի մը մէջ հրատարակուած, Կիրակ. դպրոցներ և այլն եթէ կ'ուզեն ունենալ անոնցմէ, պատրաստ ենք զրկել զանոնք: Զգին 1 Քր. և փոթի ծախքը:

Ասիկա միայն փորձի համար ըրած ենք, ժամանակի ընթացքին մէջ քիչ մը գործածելու և սրբագրելի կէտերը նկատի առնելու համար:

Ունէ դիտողութիւն սիրով նկատի կ'առնուի: